AZG NEW PDF.qxd 20/08/2010 22:10 Page 1

Azg Վազգ

21 ՕԳՈՍՏՈՍ 2010 ՇԱԲԱԹ 150 (4530)

ISSN: 1829-1651

Ադրբեջանն ուզում է գնել Հայաստան գազ հասցնող վրացական գազատարը

Ադրբեջանի պետական նավթային ընկերությունը չի բացառում Վրաստանում նավթագազատարների գնման հնարավորությունը այդ թվում՝ Ռուսաստանից Հայաստան գազ մատակարարող խողովակաշարի վրացական հատվածի ձեռքբերման մասով:

Ադրբեջանական լրատվամիջոցների տեղեկացմամբ, այս մասին ANS հեռուստաընկերությանը հայտարարել է ընկերության նախագահ Ռովնագ Աբդուլաեւը: Նրա խոսքերով, Ադրբեջանի պետական նավթային ընկրությունը հետաքրքրված է Վրաստանում բոլոր էներգանախագծերով:

Ներկա դրությամբ, ըստ Աբդուլաեւի, Ադրբեջանը ենթադրում է նշված գազատարի ձեռքբերման հնարավորությունները՝ մեծ հետաքրքրություն արտահայտելով նաեւ Վրաստանում որեւէ հաղորդակցության ուղղու կառավարման գործում:

«**Ազգը**» տեղեկացրել էր, որ Վրաստանի խորհրդարանն իր որոշմամբ Հայաստան Ռուսաստանից գազ հասցնող գազատարի վրացական հատվածը հանել է ռազմավարական նշանակություն ունեցող օբյեկտների ցանկից՝ հնարավոր դարձնելով դրա վաճառքը: Գազատարը ձեռք բերելու հետաքրքրություն են հայտնել ռուսական «Գազպրոմը», ադրբեջանական «ԱՊՆԸ»-ն եւ ղազախական «Ղազմունայգազ»-ը:

Միեւնույն ժամանակ, Վրաստանի կառավարության հերթական նիստից հետո Վրաստանի էներգետիկայի նախարար Ալեքսանդր Խեթագուրին, «Էկոնոմի.գե» կայքէջի փոխանցմամբ, հայտարարել է, որ Վրաստանը չի պատրաստվում վաճառել եւ ոչ մի գազատար: «Հնարավոր է, որ Նավթի եւ գազի կորպորացիայի ակցիաների 25 տոկոսը տեղաբաշխվի լոնդոնյան բորսայում, սակայն ոչ մի գազատար Վրաստանը չի պատրաստվում վաճառել», ասել է էներգետիկայի նախարարը:

Ա. Հ.

«Վատ է, որ խաղաղություն չէ, լավ է, որ պատերազմ չկա»

Ըստ Մեդվեդեւի՝ Մինսկի խմբի ձեւաչափի փոխընդունելի լրացումը Ռուսաստանը կընդունի որպես փաստ

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2008 թվականից ի վեր շուրջ 30 հանդիպում է տեղի ունեցել Հայաստանի եւ Ռուսաստանի նախագահների մասնակցությամբ՝ երկկողմ եւ բազմակողմ ձեւաչափերով: Այս մասին երեկ Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւի հետ համատեղ ասուլիսում հիշեցրեց Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը: Սակայն այսօրվա հանդիպումն առանձնահատուկ է, քանի որ տեղի է ունենում ՌԴ նախագահի՝ պատմության մեջ առաջին անգամ պետական այցով Հայաստանի Հանրապետություն ժամանելու ընթացքում:

Հայ ժողովրդի մեծ բարեկամ ներկայացնելով Մեդվեդեւին՝ նախագահ Սարգսյանը նշեց, որ ՌԴ նախագահի պետական այցի ընթացքում բանակցությունների օրակարգը շատ հագեցած եւ արդյունավետ է եղել: Եվս մեկ անգամ հաստատվել է հայ-ռուսական համագործակցության հետագա ամրապնդման փոխադարձ ձգտումը: «Մեր հարաբերությունները իսկապես ռազմավարական եւ դաշնակցային են: Դրանք արտացոլում են մեր ժողովուրդների զգացմունքները, եւ այդ են պահանջում Հայաստանի, հուսով եմ՝ նաեւ Ռուսաստանի ազգային եւ պետական իրական շահերը», նշեց Սերժ Սարգսյանը:

Բանակցությունների արդյունքում երեկ ստորագրվեց երկկողմ համագործակցության 5 փաստաթուղթ:

Նախ՝ Հայաստանը եւ Ռուսաստանը ներկայացրին Հայաստանում ռուսական ռազմակայանի տեղակայման ժամկետը երկարաձգելու N5 արձանագրությունը: Ապա երկու երկրների կառավարությունների միջեւ ստորագրվեցին համաձայնագրեր ՀՀ-ի աէկի նոր էներգաբլոկներ կառուցելու համար համագործակցության, առեւտրային ներկայացուցչություններ փոխադարձաբար հիմնելու մասին, նաեւ հեքընդունման (ռեադմիսիայի) համաձայնագրի իրականացման կարգի մասին կիրարկման արձանագրություն: Ստորագրվեց նաեւ Հայաստանում արտնագրված ծառայությունների կենտրոնների ու ռազմական տեխնիկայի եւ տեխնիկական սպասարկման ու վերանորոգման համատեղ ձեռնարկությունների ստեղծման բնագավառում համագործակցության հարցերի մասին փոխըմբռնման հուշագիր:

Տես էջ 3

Մեսխեթցիների ղեկավարը ձերբակալված է խարդախության մեղադրանքով

Թուրք-մեսխեթցիների «Վաթան» կազմակերպության նախագահ, ՌԴ քաղաքացի Սուլեյման Բարբակաձեն ձերբակալվել է հուլիսի 26-ին Ախալցխա քաղաքում: Ըստ «Ինտերֆաքսի» կայքէջի՝ այս մասին երեկ հայտարարել է «Մեմորիալ» իրավապաշտպան կազմակերպությունը:

Վերջին տարիներին, ըստ կայքէջի, Բարբակաձեն եւ իր կազմակերպությունը զբաղվում էին սպալինյան ճնշումների տարիներին արտաքսված «ժողովրդի վերադարձով իրենց պատմական հայրենիք Սամցխե-Ջավախք»: Ըստ իրավապաշտպանների էլ, Վրաստան վերադարձող թուրք-մեսխեթցիները «բախվում են տարբեր խնդիրների. օրենսդրական փաստաթղթերում սահմանափակումներից մինչեւ ընդդիմության ազգայնական հակազդեցությունը»:

«Վաթան» կազմակերպության նախագահին խարդախության մեղադրանք է ներկայացվել: Այլ մանրամասներ չեն հաղորդվում, բացի իրականությանն առնչություն չունեցող հայտարարություններից, թե թուրք-մեսխեթցիները չեն ցանկանում որեւէ այլ տեղ վերադառնալ, բացի «իրենց պատմական հողերից Սամցխե-Ջավախեթիում»:

Ա. Հ.

Կվաճառի Ռուսաստանը C300 Ադրբեջանին՝ չի հերքվում

Ռուսական ռազմակայանը կշարունակի աղահովել Հայաստանի անվտանգությունը: Խուսափելով պատասխանելուց, թե արդյոք Ռուսաստանը կներգրավվի՞ զինված հակամարտության մեջ մեր տարածաշրջանում, այսպես արձագանքեց Ռուսաստանի Դաշնության արտգործնախարար Սերգեյ Լավրովը: «Բոլոր այդ հարցերին արդեն իսկ պատասխանել է ՌԴ նախագահը», հղում արեց Լավրովը այն դեպքում, երբ այդ հարցին ուղղակի պատասխան ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւն այդպես էլ չհնչեցրեց Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի հետ համատեղ ասուլիսում:

ՌԴ արտաքին գերատեսչության ղեկավարը նաեւ նշեց, որ երեկ ստորագրված պայմանագրով երկարացվում է Հայաստանում ռուսական ռազմակայանի տեղակայման ժամկետը, իսկ ինչ վերաբերում է դրա գործառույթներին, նաեւ զինծառայողներին ու նրանց առնչվող մանրամասներին, ապա այդ հարցերը, համաձայն նույն այդ պայմանագրի, կարող են համաձայնեցվել երկու երկրների միջեւ:

«Ազգի» հարցին, թե ի վերջո Ռուսաստանը Ադրբեջանին վաճառելո՞ւ է հակահրթիռային C300 համալիրներից, Սերգեյ Լավրովը պատասխանեց, թե արդեն այս մասին խոսել է նախորդ հարցազրույցներում:

Հիշեցնենք, որ «Ազգը» ներկայացրել է ՌԴ ԱԳ նախարարի հարցազրույցը Հանրային հեռուստաընկերությանը, որտեղ, սակայն, մեր հնչեցրած հարցին Լավրովն ուղղակի պատասխան չի տվել: Միեւնույն ժամանակ, նրա հարցազրույցում տրված պատասխանից կարելի է ենթադրել, որ այդ վաճառքն, այնուամենայնիվ, կարող է տեղի ունենալ:

Ի դեպ, Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի օգոստոսի 19-ի հրամանագրով Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը հայ-ռուսական դարավոր բարեկամական հարաբերությունների ամրապնդման եւ զարգացման գործում ներդրած մեծ ավանդի համար պարգեւատրվել է Սուրբ Մեսրոպ Մաշտոցի շքանշանով:

Ա. Հ.

Իրանում այսօր շահագործման է հանձնվում Բուշեհրի ատոմակայանը

Այսօր Իրանում պաշտոնապես շահագործման կհանձնվի Բուշեհրի ատոմակայանը: Երկրի հարավային նահանգում ատոմակայանի կառուցումն սկսվել է դեռեւս 1975-ին, սակայն որոշ ժամանակ անց շինարարությունն ընդատվել է: Միայն այն բանից հետո, երբ 1995-ին Ռուսաստանը ներգրավվել է ծրագրում, Բուշեհրում վերսկսվել է ատոմակայանի կառուցումը. իրանական ատոմակայանը, փաստորեն, ռուս-իրանական համատեղ ծրագիր է, որը Իրանի ատոմային ծրագրի տարրերից է, ինչն էլ իր հերթին Թեհրանում անվանում են «խաղաղ ծրագիր»: Արեւմուտքում շատերը կարծում են, որ ատոմային արդյունաբերության զարգացումը Իրանում կհանգեցնի ատոմային ռումբի ստեղծմանը, սակայն որոշ փորձագետներ հակառակ կարծիքն ունեն: Այս վերջինը հիմնավորվում է հետեւյալ կետերով՝ Բուշեհրի ատոմակայանը կառուցումը արագացնում է, որ Իրանն իր ատոմային կարողություններն օգտագործում է բացառապես խաղաղ եւ անվտանգ՝ համագործակցելով ՄԱԳԱՏԷ-ի հետ:

Այսօր Բուշեհրում տեղի կունենա միայն վառելիքի լիցքավորումը, իսկ էներգետիկայի արտադրության մեկնարկը նախատեսվում է ավելի ուշ:

Հ. Ա.

Հայկական տանքի տակ ռուս-բելառուսական հաշտեցո՞ւմ

Երեկ Երեւանում մեկնարկեց ՀԱՊԿ ոչ պաշտոնական երկօրյա գագաթաժողովը՝ մասնակցությամբ կազմակերպության անդամ երկրների նախագահների: Գագաթաժողովին ՀԱՊԿ անդամ 7 երկրներից մասնակցում էին 6 երկրի ղեկավարներ: Երեւան են ժամանել Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն, Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաեւը, Ղրղզստանի նախագահ Ռոզա Օթունբաեւան, Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւը եւ Տաջիկստանի նախագահ Էմոմալի Ռահմոնը: Գագաթաժողովին չէր մասնակցում Ուզբեկստանի նախագահ Իսլամ Քարիմովը: ՀԱՊԿ ոչ պաշտոնական գագաթաժողովի գլխավոր ինտրիգը, որ ոչ միայն ռուսական, այլեւ արտասահմանյան ԶԼՄ-ների ուշադրության կենտրոնում էր, Ռուսաստանի եւ Բելառուսի նախագահների մեկ հարկի տակ հանդիպումն է:

«Գաֆեսճյան» արվեստի կենտրոնի «Խանջյան» սրահում մեկնարկած ոչ պաշտոնական գագաթաժողովը երկրորդ եւ այս տարվա վերջին հանդիպումն էր: Այն կրում էր ոչ պաշտոնական բնույթ, հետեւաբար ավարտին որեւէ փաստաթուղթ չի ստորագրվելու:

Ռուսաստանի ԱԳՆ ղեկավար Սերգեյ Լավրովը հայտարարել էր, որ գագաթաժողովն անցնելու է վստահության մթնոլորտում: «Դասերը, որ մենք քաղում ենք ղրղզական դեպքերից, պետք է բերեն նրան, որ ձեռնարկվեն լրացուցիչ ջանքեր ՀԱՊԿ արդյունավետությունը բարձրացնելու համար»:

Բացման խոսքում նախագահ Սերժ Սարգսյանը կարեւորեց նմանօրինակ հանդիպումների անցկացումը: «Մեկուկես տարի առաջ ի հայտ եկավ արագ արձագանքման հավակական ուժերի ստեղծման գաղափարը, որն այսօր ձեւավորված է եւ պատրաստ լուծելու իր առջեւ դրված խնդիրները: Վստահ եմ, որ կարող ենք մտքեր փոխանակել պետություններ համար առավել հրատապ, ինչպես նաեւ ՀԱՊԿ-ի ներուժի մեծացման հետ կապված հարցերի շուրջը, նաեւ այն աշխատանքի, որն արվում է կազմակերպության պատասխանատվության շրջանակներում խաղաղության, կայունության եւ անվտանգության ապահովման համար», ասաց նախագահ Սարգսյանը:

«Հուսով եմ՝ սա առաջին, բայց ոչ վերջին ՀԱՊԿ հավաքն է այստեղ, եւ մեզ կրկին կհրավիրեք», այսպես սկսեց իր խոսքը ՀԱՊԿ-ում նախագահող երկրի ղեկավար՝ ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւը: Նա գործընկերներին առաջարկեց քննարկել 2 խումբ հարցեր՝ Ղրղզստանի իրավիճակի կայունացման ուղղությամբ ՀԱՊԿ ձեռնարկելիք քայլերն ու հակաճգնաժամային արդյունավետ համակարգի խնդիրն ու Մոսկվայում ՀԱՊԿ պաշտոնական գագաթաժողովի կազմակերպման հարցեր: Այնուհետեւ ՀԱՊԿ անդամ երկրների ղեկավարները վերոնշյալ հարցերը քննարկեցին արդեն փակ դռների հետեւում:

Ավելի քան երկու ժամ տեւած քննարկումը Ռուսաստանի եւ Հայաստանի նախագահները բնութագրեցին բաց եւ կառուցողական: Դմիտրի Մեդվեդեւն ընդգծել է, որ ՀԱՊԿ-ը տարածաշրջանի վրա ազդեցություն ունեցող իրական կազմակերպություն է: «ՀԱՊԿ-ը կանխում է տարածաշրջանային մի շարք բացասական գործընթացներ եւ կառուցողական ազդեցություն է թողնում սառեցված հակամարտությունների վրա»: Շոշափվել է նաեւ հակաճգնաժամային նոր մեխանիզմի հարց: ՌԴ նախագահը շեշտել է, որ պետք է համակարգը դարձնել առավել արդյունավետ եւ ստեղծել նոր ինստիտուտներ: «Պետք է ավելի արագ եւ արդյունավետ գործենք: Այդ ճանապարհին պետք է վերլուծել ՆԱՏՕ-ի, Եվրամիության եւ ՄԱԿ-ի փորձը»: Մեդվեդեւը տեղեկացրեց, որ ՀԱՊԿ հաջորդ ոչ պաշտոնական գագաթաժողովը կայանալու է Մոսկվայում՝ այս տարի, որի ընթացքում նախագահությունը կանցնի Բելառուսին՝ ընդգծելով, որ Բելառուսի նախագահը տվել է իր համաձայնությունը: «Դա շատ է ուրախացնում մեզ», եզրափակեց նա:

Ավարտին 6 երկրի ղեկավարները մեկնեցին Սեւան: Երկկողմ հանդիպումներն ու քննարկումները կշարունակվեն այսօր Սեւանի «Հարսնաքար» համալիրում:

ՀԱՄՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

AZG NEW PDF.qxd 20/08/2010 21:34 Page 1

ՈՂ նախագահը Հայաստանի նախագահի եւ գյումրեցիների հետ հիշեց Կովկասի համար իրական պայքարը

Սպիտակ, կապույտ, կարմիր եւ կարմիր, կապույտ, ծիրանագույն... այս գույները երեկ Գյումրիում գերիշխում էին: 7-ամյա Դավիթը, որի մի ձեռքում հայկական, մյուսում՝ ռուսական եռագույնն էր, իր հազարավոր համաքաղաքացիների հետ ելել էր դուրս՝ դիմավորելու Հայաստանի եւ Ռուսաստանի նախագահներին, որոնք երեկ Գյումրիում վերականգնեցին «հայ-ռուսական դարավոր բարեկամության հիմնաքարերից մեկը», հենց այստեղ արտահայտվեց Դմիտրի Մեդվեդեւը «Պատվո բլուր» հուշահամալիրի մասին:

«Հարգելիս, ես այսպիսի հիասքանչ բան չէի սպասում»

Ազատագրող զինվոր, որը սեփական դրոշն է հիմնում ազատագրված հողում եւ արծիվ, որը ջախջախում է թշնամու դրոշը: Այս արձանը՝ «Կարսի հերոսներին» խորագրով, մինչեւ 1919 կանգնած էր Կարսում: Սակայն 1919-ին թուրքերն այն պայթեցնում են: Այժմ քանդակագործ Յուրա Միասյանի ջանքերով վերստեղծված արձանը Գյումրիի «Պատվո բլուր»-ում է: «Երբ Հայաստանում ՈՂ դեսպանը Վյաչեսլավ Կովալենկոն տեսավ աշխատանքը, ասաց՝ հարգելիս, ես այսպիսի հիասքանչ բան չէի սպասում»: «Պատվո բլուրում» վերականգնվել է նաեւ դեռեւս 1866-ին օծված Սուրբ Միքայել հրեշտակապետի մատուռը: Երկու երկրների նախագահների ներկայությամբ երեկ մատուռը վերաօծվեց՝ Ռուս ուղղափառ եկեղեցու ներկայացուցիչ վարդապետ Դմիտրի Սոլոնովի գլխավորությամբ: Նախագահները մտան մատուռ, որի պատերից մեկին փակցված էր Մոսկվայի եւ համայն Ռուսիո պատրիարք Կիրիլի նվերը Գյումրու մատուռին՝ Քրիստոսի սրբապատկերը:

«Պատվո բլուրը» ռուսական զինվորական գերեզմանոց է Գյումրիում: Ռուս-թուրքական արյունալի պատերազմներում զոհ դարձած բազմաթիվ ռուս զինվորներ իրենց վերջին հանգրվանը գտան այստեղ: Ինչպես շեշտեց Հայաստանի նախագահն իր ելույթում՝ «Մենք հարգում ենք մեր պատմությունը, հարգում ենք այն զինվորների հիշատակը, որոնք իրենք վերջին հանգրվանը գտան հայկական հողում»: Պատմությունը պահպանել է միայն 155 ռուս սպաների անուններ. հուշահամալիրի տաղանքարերի վրա հնարավոր է կարդալ նրանցից բոլորի անունները:

Սովետական տարիներին հուշահամալիրը մնացել էր «բախտի ճմահաճույքին», եւ միայն 2009-ին Շիրակի եւ ՈՂ Ուլյանովսկի մարզի համագործակցության, Երեւանում ՈՂ դեսպան Կովալենկոյի նախաձեռնությամբ եւ անձամբ ՀՀ նախագահի հովանավորությամբ որոշում է ընդունվել վերականգնելու հուշահամալիրը: Այս նպատակով էլ ստեղծվել է աշխատանքային խումբ՝ Անդրանիկ Նիկողոսյանի գլավորությամբ, հիմնվել է հայ-ռուսական բարեգործական կազմակերպություն: «Պատվո բլուրը» վերականգնվել է ռուս ճարտարապետ Օլեգ Վլադիմիրովի նախագծով:

Եղբայրական ժողովուրդներ, եղբայրական պետություններ

«Օսմանյան կայսրության լծի տակ ապրող ժողովուրդները ակնկալում էին ազատագրում եւ փրկություն Ռուսաստանի աջակցությամբ: Ռուսական բանակի մուտքը նրանց բնորրաններ նշանակում էր ազատության, ինքնորոշման եւ անկախացման հնարավորություն», ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, ողջունելով ռուս գործընկերոջն ու ներկաներին, այսպես սկսեց իր ելույթը: Նախագահն ընդգծեց, որ հայ ժողովուրդը, որի պատմական հայրենիքը բաժանված էր երկու՝ օսմանյան եւ ռուսական կայսրությունների միջեւ, հենց ռուսական բանակի օգնությամբ էր ակնկալում ազատագրել իր հայրենիքը. «Հայ ժողովուրդը երազում էր իր պատմական հայրենիքի ազատագրման մասին, մինչդեռ Օսմանյան կայսրությունը սպասում էր հարմար պահի՝ վերջնականապես լուծելու Հայկական հարցը», նշեց Սերժ Սարգսյանը: Հայաստանի նախագահը շնորհակալություն հայտնեց հուշահամալիրի վերականգնմանը մասնակից բոլորին, ընդգծելով. «Զինվորական գերեզմանոցի վերականգնումը դարձավ պատվի գործ՝ արժանի հայ-ռուսական հարաբերությունների մակարդակին: Ով չի հիշում անցյալը, նա չունի ապագա. «Պատվո բլուրը» հայ եւ ռուս ժողովուրդների բարեկամության եւս մեկ խորհրդանիշն է: Ես վստահ եմ, որ այստեղ միշտ կլինեն թարմ ծաղիկներ, վառ՝ ինչպես մեր հարաբերությունների պատմությունը: Հիշելով մեր հերոսներին՝ մենք պետք է



խաղաղության եւ արարման կոչով դիմենք մեր երիտասարդ սերնդին», ասաց ՀՀ նախագահը: Հուշահամալիրում թարմ եւ վառ ծաղիկների տեղադրումը սկսվեց հենց երեկվանից. երկու նախագահների տեղադրած ծախկեպսակներին հաջորդեցին հազարավոր գյումրեցիների ծաղիկները. Գյումրին արժանի եղավ նահատակվածների հիշատակին:

«Ինձ համար մեծ ուրախություն եւ պատիվ է այսօր գտնվել այստեղ՝ Հայաստանի նախագահի հետ: Այստեղ ռուս զինվորներն են, սպաները, բժիշկները...: Ես ուզում եմ իմ եւ Ռուսաստանի ժողովրդի անունից շնորհակալություն հայտնել Հայաստանի եւ հայ ժողովրդին՝ ռուս զինվորների հուշահամալիրը վերականգնելու եւ պահպանելու համար», ելույթի սկզբում նշեց ՈՂ նախագահը: Դմիտրի Մեդվեդեւը մի քանի անգամ իր ելույթում, խոսելով հայ-ռուսական հարաբերությունների մասին, դրանք որակեց՝ եղբայրական. «Ուս ուսի տված՝ ռուս ազատագրողների հետ կռվում էին հազարավոր հայեր, վրացիներ, աբխազներ եւ օսեր, կռվում էին եղբայրաբար, կռվում էին իրենց հայրենիքի ազատագրման համա: Պետք է մշտապես հիշել պատմությունը, մենք երբեք այն չենք մոռանա մեր հարաբերություններում: Ես ուզում եմ շնորհակալություն հայտնել այսօր, որ մենք հիշում ենք Կովկասի համար իրական պայքարի պատմությունը»: Այնուհետեւ Մեդվեդեւն անդրադարձավ ժամեր առաջ թարմացված Գյումրիում ռուսական ռազմաբազայի տեղակայման ժամկետը երկարաձգելու մասին արձանագրությանը. «Սա մեր առանձնահատուկ բարեկամական հարաբերությունների հիմքերից է: Անվտանգություն եւ խաղաղություն. սա պետք է բոլորին՝ ե՛ւ Հայաստանին, ե՛ւ այլ պետություններին, ե՛ւ Ռուսաստանին»: Ելույթի վերջում ՈՂ նախագահը կրկին շնորհակալություն հայտնեց հայ ժողովրդին ընդգծելով. «Թող այս հիասքանչ հուշահամալիրը մշտապես հիշեցնի եւ խորհրդանշի մեր պետությունների եւ ժողովուրդների եղբայրական փոխօգնությունն ու բարեկամությունը»:

Հուշահամալիրում հնչեցին Ռուսաստանի եւ Հայաստանի օրհներգերը, երկու նախագահները շրջեցին հուշահամալիրի տարածքում, արձաթափայլ եղեւնի տնկեցին եւ ռուսական արտադրության ուղղաթիռներով վերադարձան Երեւան՝ մասնակցելու ՀԱՊԿ երկրների ղեկավարների ոչ պաշտոնական գագաթաժողովին:

ՀՈՎԻԿ ԱԲԵՅԱՆ
Գյումրի-Երեւան

Պարգեւներ՝ հայ-ռուսական համագործակցության հարցում ներդրման համար

ՈՂ նախագահ Դմիտրի Մեդվեդեւը երեկ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի հետ համատեղ ասուլիսից հետո պետական պարգեւներ հանձնեց Հայ-ռուսական սլավոնական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի մի խումբ ներկայացուցիչների: «Բարեկամության շքանշանով» է պարգեւատրվել համալսարանի ռեկտոր Արմեն Դարբինյանը, «Պուշկինի մեդալով»՝ համալսարանի ռուսական բանասիրության ինստիտուտի գիտական ղեկավար Արամ Գրիգորյանը եւ համալսարանի ամբիոնի վարիչ Անահիտ Խաչիկյանը: «Ռուսաստանի Դաշնության բարձրագույն դպրոցի վաստակավոր աշխատող» պատվավոր կոչման է արժանացել համալսարանի առաջին պրոռեկտոր Գագիկ Սարգսյանը: Ա. Հ.

Ցավակցություն

Խոր վշտով տեղեկացանք տկն. Անժել Թովմասյանի մահվան մասին:

Այդ առթիվ Լոնդոնի Թեֆեյան խնամակալ մարմնի, «Թեֆեյան կենտրոն» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի, տնօրենության եւ աշխատակազմի անունից հայտնում ենք մեր անկեղծ ցավակցությունները տկն Թովմասյանի հարազատներին, Թադեւոսյան ընտանիքին, իր բոլոր կարեկից եւ համակիր բարեկամներին:

Մեծ ակնածանքով եւ խորին երախտագիտությամբ պիտի մնան մեր հիշողության մեջ թե՛ տկն Թովմասյանի եւ թե՛ պրոֆ. Բարունակ Թովմասյանի բարի անունները որպես ազգի իրական նվիրյալներ:

Վշտակցությամբ՝

«ԹԵՔԵՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
Լոնդոն-Երեւան

ՀԱՅ ԱՌՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ամենայն հայոց կաթողիկոսության եւ Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսության կանոնական հանձնախմբի ժողովի

Նախորդ համարում հրապարակել էինք Մայր աթոռից ստացված հաղորդագրությունը Ս. Էջմիածին-Անթիլիաս ծիսական խառը հանձնախմբի անդրանիկ նիստի գումարման մասին: Այսօր հրապարակում ենք երկու կաթողիկոսությունների միջեւ կանոնական խառը հանձնախմբի հերթական նիստի մասին ստացված նոր հաղորդագրությունը, որը, ինչպես եւ նախորդը, հաստատում է «Ազգի» նախապես ունեցած տեղեկությունը առ այն, որ զույգ կաթողիկոսությունների միջեւ ըստ երեւույթին «ձնհալ» է սկսվել, որն անկասկած սկիզբ է առել Ամենայն հայոց հայրապետի եւ Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսի միջեւ անձնական շփումներից, ինչը միմիայն գոհունակություն կարող է պատճառել Հայ եկեղեցու երկփեղկված վիճակով մտահոգ զանգվածներին:

Խմբ.

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի եւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսի օրհնությամբ եւ բարձր տնօրհնությամբ 2005 թ. ստեղծված կանոնական հանձնախումբը սույն թվականի օգոստոսի 18-19 Մայր աթոռ Սուրբ Էջմիածնում գումարեց իր հերթական ժողովը:

Համատեղ հանձնախմբի նպատակն է իր աշխատանքով նպաստել Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու սրբազան առաքելության առավել ծաղկմանը եւ ներքին միասնականության ամրապնդմանը, Հայ եկեղեցու կյանքում առկա կանոնական խնդիրների քննությանն ու լուծումների առաջադրմանը:

Կանոնական հանձնախմբի անդամներն են՝

Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը (ատենապետ).

Տ. Օշական արքեպիսկոպոս Չոլոյանը (ատենապետ).

Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանը (ատենադպիր).

Տ. Նարեկ եպիսկոպոս Ալեմեզյանը (ատենադպիր).

տիար Ջիմ Գալուստյանը.

տիար Արսեն Դանիելյանը.

տիար Նիկոլայ Հովհաննիսյանը.

տիար Տիգրան Ջինբաշյանը:

Օգոստոս 18-ին վեհարանում ժողովի մասնակիցներին ընդունեց Ամենայն հայոց կաթողիկոսը: Նորին սրբությունը, հայրապետական իր օրհնությունը բերելով ժողովականներին, բարի արդյունավորում մաղթեց ժողովի աշխատանքներին: Հանդիպման ընթացքում Օշական սրբազանը Վեհափառ հայրապետին փոխանցեց Արամ Ա Վեհափառ հայրապետի եղբայրական ողջույնները:

Ժողովը բացվեց Տերունական աղոթքով: Ատենապետների ողջույնի խոսքերից հետո «Հայ եկեղեցու կանոնական վիճակը (հայ եկեղեցաբանության սահմանումը)» թեմայի շուրջը հանձնախմբի ուշադրությանը զեկույցներ ներկայացրեց Նարեկ եպիսկոպոս Ալեմեզյանը («Ընդհանուր ներածական եւ եկեղեցաբանության ասվածաբանական հիմերը»), Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը («Հայ եկեղեցու ասվածաբանական-եկեղեցաբանական սահմանումը») եւ Միքայել եպիսկոպոս Աջապահյանը («Հայ եկեղեցու գործնական արտահայտությունը ներկայիս»): Յուրաքանչյուր զեկուցումից հետո զեկուցողները պատասխանեցին ժողովականների հարցումներին: Տեղի ունեցավ մտքերի փոխանակում եւ ընդհանուր քննարկում:

Ժողովի ավարտին, ելնելով ժողովի աշխատանքի ջերմ, կառուցողական մթնոլորտից եւ արդյունքներից, ժողովականները համոզում հայտնեցին, որ որդեգրած առաջադրանքների իրագործումը մեծապես պիտի նպաստի Հայ եկեղեցու հզորացմանը եւ միասնականությանը:

Փոքր երկրները երբեք էլ չեն ունեցել իդեալական ինքնիշխանություն

Հայաստանում ռուսաստանյան ռազմաբազաների տեղակայումը մինչեւ 49 տարով երկարաձգելը բխում է ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Հայաստանի ազգային շահերից: Երեկ «Փաստարկ» ակումբում այսպիսի համոզմունք հայտնեց «Նորավանք» հիմնադրամի տնօրեն Գագիկ Հարությունյանը: Նրա խոսքով՝ իր ինքնիշխանությամբ Հայաստանը տարածաշրջանում առաջատար դիրք է գրավում: Ռուսական ռազմաբազայի տեղակայման ժամկետի երկարաձգումը չի խաթարում Հայաստանի ինքնիշխանությունը, սակայն փոքր երկրները միշտ էլ իդեալական ինքնիշխան չեն եղել, «Այսօր էլ չունեն իդեալական ինքնիշխանություն», հավելեց Գագիկ Հարությունյանը: Ռուսաստանի հետ նոր պայմանագիր կնքելու շտապողականությունը, բանախոսի կարծիքով պայմանավորված է Ռուսաստանի նոր քաղաքականությամբ, «Ռուսաստանը շտապում է ամրագրել իր հենակետային տարածքները»:

Վերջերս Թուրքիայի ու Ադրբեջանի նախագահների միջեւ կնքվեց ռազմական համագործակցության պայմանագիր: Ըստ բանախոսի՝ տարածաշրջանում այսօր նշմարվում է նոր բեւեռ՝ Թուրքիա եւ Ադրբեջան բեւեռը, որն անգամ հավակնություններ ունի Վրաստանի նկատմամբ: Հայաստանում ռուսական 02-րդ ռազմաբազայի ներկայությունը երկարաձգելը հավասարակշռում է իրադրությունը տարածաշրջանում:

Գագիկ Հարությունյանն անդրադարձավ նաեւ այն հարցին, թե Ռուսաստանը պատրաստվում է զենիթահրթիռային C300 համալիրներ վաճառել Ադրբեջանին. «Պետք է ամեն ինչ անենք, որ C300-ի վաճառքը չկայանա»: Մեր դաշնակիցներից ակնկալում ենք իդեալական պահելաձեւ, սակայն այդպիսի բան լինել չի կարող. «Յուրաքանչյուր պետություն ունի իր շահերը», հավելեց բանախոսը: Ի. Պ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետության 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի: Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW PDF.qxd 20/08/2010 20:34 Page 1

Վերջաբան

Այս եւ երեկվա լրահոսում առկա այլ երեւացող, ականջ շոյող վերնաշերտային իրողությունների հետ միաժամանակ չեն փարատվում այն մտահոգությունները, որոնք երեկ տարբեր փորձագիտական գնահատականների տեսքով լի էին մամուլում, ինտերնետ տարածքում, անգամ վերահսկվող հեռուստատեսությունների զրուցասիրական հաղորդումներում:

Իսկ այդ մտահոգություններից շատերը ֆիքսում էին այսբերգի չերեւացող մասը. բանն այն է, որ տարածաշրջանային վերադասավարումները, որոնց մասին խոսվում էր տեւաբար, եւ որոնք անընդհատ քայլ առ քայլ իրականացվում էին ակտիվ ու պասիվ խաղացողների տարբեր գործողություններով մեր տարածաշրջանում, մտել են որոշիչ փուլ, քանի որ գլխավոր խաղացողներից մեկը վերջերս մեկը մյուսի հետեւից կտրուկ գործողություններ է անում՝ Ռուսաստանը համեմատաբար վերջերս մատդրություն հայտնեց Աբխազիայում ու Հարավային Օսիայում ռազմաբազաներ ունենալու մասին, արդիականացնում է իր կասպյան նավատորմը, մի շարք այլ տնտեսական միջոցառումներ է իրականացնում մեր տարածաշրջանում եւ նրան հարակից շրջաններում: Հիմա էլ Հայաստանում ռազմաբազաների պայմանագիրը երկարացրեց՝ նաեւ տնտեսական համագործակցությունն ակտիվացնելու մտադրություն հայտնելով եւ անգամ համատեղ ատոմակայանի կառուցում ուրվագծելով:

Օրակարգում են Հայաստան-Իրան երկաթուղու, նավթավերամշակման գործարանի եւ նավթամուղի կառուցման ծրագրեր: Սրանք նախ պետք է դիտարկել տարածաշրջանում Ռուսաստանի դիրքերն ամրապնդելու շատ հստակ քայլեր կամ որպես գլխավոր խաղացողի կարգավիճակին տիրանալու հայտ: Մի պահ պասիվացած եւ խաղը ռուսներին հանձնած ԱՄՆ-ի հակակշռող քայլերը հավանաբար նույնպես պետք է հետեւեն՝ ըստ իրերի տրամաբանության, եթե ԱՄՆ-ը այլ «սացվածքների» վերաբերյալ փոխպայմանավորվածությունների պարագայով առաջնորդվելով՝ չի շարունակելու պասիվ մնալ:

Վերջին դեպքում, ուրեմն, մեր տարածաշրջանում տեղի ունեցող ամեն բան շուտով գուցե կախված լինի հստակորեն Ռուսաստանից: Թվում է՝ սա մեզ համար դրական անդրադարձ պիտի ունենա՝ մեր ռազմավարական դաշնակիցն է, որի հետ համագործակցության եւ անվտանգության երաշխիքների պայմանագրեր ենք կնքում: Սակայն ծայրահեղ ու տարամետ մոտեցումներ կան այսօր Հայաստանում տեղի ունեցողի վերաբերյալ: Կան փորձագետներ, որոնք շատ խիստ մտահոգություններ ունեն առ այն, որ C300 վաճառելով Ադրբեջանին՝ Ռուսաստանը զինում է տարածաշրջանը, էլ չասած, որ դրանից նախ հսկայական տնտեսական շահ է ստանում, հետո խաղաֆական դիվիդենտ ստանում, մինչդեռ Ադրբեջանին այդպիսով ուժեղացնում եւ գործոն է դարձնում: Իսկ դրանից հետո հետց կլինի կամք թելադրել բոլորին, այդ թվում՝ Հայաստանին եւ Ադրբեջանին, ու առանց Ռուսաստանի անգամ ճանճը չի տզզա մեր տարածաշրջանում:

Իհարկե, հերթական անգամ մենք ականատես ենք դառնում այն փաստին, որ առանց ներկայացուցչական օղակներում լայն քննարկման այսպիսի կարեւոր հարցի վերաբերյալ, ինչպես ռազմաբազաների ժամկետի երկարաձգումն է, ժողովրդի, պետության անունից մի նեղ շրջանակ է պայմանագիր ստորագրում, մինչդեռ այն տասնամյակներ դեռ վերաբերելու է մեր երկրի անվտանգությանն ու նրա բնակիչների կյանքին: Հասկանալի է, որ կասկածելի մակարդակի մեր Ազգային ժողովը ի վիճակի չէ լուրջ քննարկել եւ ազդեցիկ տեսակետ ունենալ այսպիսի պետական նշանակության հարցի մասին, սակայն այստեղ ժողովուրդը մեղք չունի, այլ այդ նույն մարդիկ, ովքեր հիմա պայմանագիր են կնքում, իսկ ժամանակին կարողացան իրենց ցանկալի, սակայն օրենսգիտությունից հեռու մարդկանցով լցնել Ազգային ժողովը: Ահա եւ իրենց արածն իրենց դեմ է աշխատում: Հիմա Հայաստանի անվտանգությանն ու պետականությանը, ժողովրդի առագային վերաբերող համաձայնագրերի ստորագրման պատասխանատվությունն ընկնում է մի խումբ մարդկանց վրա՝ լավ արդյունք գրանցվի, թե վատ:

Բոլոր դեպքերում, անկախ Հայաստանի համար ռազմավարական եւ մարտավարական երեւութական դրական շեշտադրումներից՝ չի կարելի անտեսել Մեդվեդեւի այցի աշխարհաքաղաքական ենթատեքստը, որն իր մեջ ականներ ունի հենց Հայաստանի համար:

Երեւի այդքան պետք չէր ոգեւորվել նրանից, որ Մեդվեդեւն անմիջապես օդանավակայանից մեկնեց Ծիծեռնակաբերդ, բավական երկար շոյեց ժաղավենն այն ծաղկեպսակի, որ իր անունից էր դրվել Եղեռնի զոհերի հուշարձանին. Մեդվեդեւը մեծ երկրի նախագահ է, որի այցերի ամեն վայրկյանը պլանավորված է այդ երկրի շահերին ու կարգերին համապատասխան արարողակարգով, ու դա բնական է, իսկ պրագմատիզմը վաղուց մեր օրակարգի մշտական ներկան պետք է լինի: Երեւի պետք էլ չէր այդքան սովետական ոգով ռուսամետ նյութեր տեղակայել Մեդվեդեւի այցի մասին պատմող նյութերի առջեւից եւ հետեւից՝ կեղծավորելով ռուսներին, ու սա մի փայտիկի հրահանգով անում են համարյա բոլոր հեռուստաընկերությունները:Առավել ազնիվ է ուղիղ ասել այն մասին, թե ի՞նչ մտածում ենք այցի շուրջը, ներկայացնել հասարակությունում առկա տեսակետներից ամենահատկանշականները՝ ե՛ւ դրական մոտեցումները, ե՛ւ մտահոգությունները, հաշվել պլյուս-մինուսները, եւ դա անել առանց հնացած հնարքների: Բայց դե մերոնք կարծրատիպերից պոկվողը չեն, եւ հեռուստաընկերությունների մեծ մասն աշխատում է նույն դաջով:

Եվ երեւի չարժե ամաչել նաեւ նրանից, որ մենք մեծ պետության շահերում փորձում ենք մեր շահը փնտրել, սա նորմալ է՝ աշխարհն է կառուցված շահերի համադրման վրա, իսկ մենք բոլոր ելույթների ու հնչած խոսքի մակարդակով աշխատում ենք նախ սիրաշահել ռուսին: Իսկ Ռուսաստանը բնավ էլ չի ծածկում, որ ինքն ուզում է ծավալել անսահմանափակ ազդեցություն, վերականգնել կայսրության եւ հզոր գերտերության երբեմնի փառքը: Հայաստանը, որ չի կարող այդ խարհաքաղաքական ենթատեքստը, որն իր մեջ ականներ ունի հենց Հայաստանի համար:

Երեւի այդքան պետք չէր ոգեւորվել նրանից, որ Մեդվեդեւն անմիջապես օդանավակայանից մեկնեց Ծիծեռնակաբերդ, բավական երկար շոյեց ժաղավենն այն ծաղկեպսակի, որ իր անունից էր դրվել Եղեռնի զոհերի հուշարձանին. Մեդվեդեւը մեծ երկրի նախագահ է, որի այցերի ամեն վայրկյանը պլանավորված է այդ երկրի շահերին ու կարգերին համապատասխան արարողակարգով, ու դա բնական է, իսկ պրագմատիզմը վաղուց մեր օրակարգի մշտական ներկան պետք է լինի: Երեւի պետք էլ չէր այդքան սովետական ոգով ռուսամետ նյութեր տեղակայել Մեդվեդեւի այցի մասին պատմող նյութերի առջեւից եւ հետեւից՝ կեղծավորելով ռուսներին, ու սա մի փայտիկի հրահանգով անում են համարյա բոլոր հեռուստաընկերությունները:Առավել ազնիվ է ուղիղ ասել այն մասին, թե ի՞նչ մտածում ենք այցի շուրջը, ներկայացնել հասարակությունում առկա տեսակետներից ամենահատկանշականները՝ ե՛ւ դրական մոտեցումները, ե՛ւ մտահոգությունները, հաշվել պլյուս-մինուսները, եւ դա անել առանց հնացած հնարքների: Բայց դե մերոնք կարծրատիպերից պոկվողը չեն, եւ հեռուստաընկերությունների մեծ մասն աշխատում է նույն դաջով:

Եվ երեւի չարժե ամաչել նաեւ նրանից, որ մենք մեծ պետության շահերում փորձում ենք մեր շահը փնտրել, սա նորմալ է՝ աշխարհն է կառուցված շահերի համադրման վրա, իսկ մենք բոլոր ելույթների ու հնչած խոսքի մակարդակով աշխատում ենք նախ սիրաշահել ռուսին: Իսկ Ռուսաստանը բնավ էլ չի ծածկում, որ ինքն ուզում է ծավալել անսահմանափակ ազդեցություն, վերականգնել կայսրության եւ հզոր գերտերության երբեմնի փառքը: Հայաստանը, որ չի կարող այդ կարգի ցանկություններ ունենալ կամ ուրիշի այդ կարգի ցանկությունները չեզոքացնել՝ փոքր երկրի իր կարգավիճակից ելնելով, կարող է սակայն առավելագույն շահերը քաղել եւ նվազագույն վնասով դուրս գալ, համենայն դեպս դրա համար են մեր երկրի տարբեր գերատեսչություններն ի սկզբանե եւ ի պաշտոնե:

Այո, մենք խնդիր ունենք պահպանելու մեր անկախության յուրահատկությունը, չզիջելու մեր անվտանգությունից ոչինչ, հասկանալ Լավրովի ասած՝ պատերազմի անթույլատրելիության մասին մտքի բոլոր ենթախորքերը, չտրվել պահին, կուլ չգնալ, ճնշման տակ չզիջել մեր շահերը, սակայն դրա համար ձեռքիդ խաղաթղթերը պետք է խեղճուկրակ չլինեն, հակափաստարկներիդ հետեւում պետք է զանգված եւ ժողովուրդ լինեն ու պաշտոնյաների պրոֆեսիոնալիզմ: Ռազմաբազանե՞րը, 49 տարո՞վ. է, հա,

Գլխավոր խաղացողի կարգավիճակին տիրանալու հայտ

Նախագահ Սարգսյանը ՌԴ նախագահի հետ երեկվա հանդիպումն առանձնահատուկ, նոր փուլ սկզբնավորող անվանեց, Ռուսաստանի նախագահ Մեդվեդեւը նույն հանդիպումն անվանեց երկու երկրների համագործակցության բարձրակետ:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ

«Քաղվի փողոցներում մտահոգություն է...»

Այսպես է արձագանգում թուրքական հանրային հեռուստատեսությունը ՀՀ տարածքում ռուսական ռազմակայանի գործունեության երկարաձգմանը:

ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւի պետական այցի շրջանակում Հայաստանի տարածքում տեղակայված ռուսական ռազմակայանի գործունեությունը մինչեւ 2044 թիվը երկարաձգելու արձանագրության ստորագրումը կարեւոր երեւույթ է կողմերի համար, ունի տարածաշրջանային նշանակություն, հետեւաբար պետք է լայն արձագանք գտներ հարավկովկասյան մյուս հանրապետություններում, ինչպես նաեւ տարածաշրջանի երկրներում:

Տվյալ դեպքում խոսքը մասնավորապես վերաբերում է Հայաստանի նկատմամբ ակնհայտ թշնամական դիրքորոշում որդեգրած Ադրբեջանին եւ հատկապես Թուրքիային, քանի որ վերջինը միաժամանակ դառնում է նաեւ իր կրտսեր եղբոր մտավախությունների թարգմանը: Դրանում համոզվելու համար կարելի է անդրադառնալ թուրքական հանրային հեռուստատեսության օգոստոսի 19-ի հաղորդմանը, որի գլավոր տարբերակն արտացոլված է կայքէջում:

Ահա թե ինչ է գրել թուրքական հանրայինը. «Հայաստանում Ռուսաստանի ռազմական ներկայության երկարաձգումը մինչեւ 2044 թիվը բուռն հակազդեցություն է առաջ բերել Ադրբեջանում: Բաքվի փողոցներում մտահոգություն է... Դա միաժամանակ վիճարկելի է դարձնում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրի՝ Ռուսաստանի անկողմնակալությունը...

Մինչեւ 2044 թիվը երկարաձգվում է Հայաստանի տարածքում ռուսական ուժերի ներկայության պայմանագիրը:

Ըստ Հայաստանի արտգործնախարար Նալբանդյանի՝ ռուսական ռազմական ներկայության ընդլայնումը նախատեսող այս համաձայնագիրը ծառայելու է ոչ միայն Ռուսաստանի, այլեւ Հայաստանի շահերին:

«Ասլաս» ռազմավարական հետազոտությունների կենտրոնի տնօրեն Էլիան Շահինօղլին ասաց. «Համաձայնագրի ստորագրում հայկական կողմի պնդմամբ՝ նշանակում է պատերազմի դեպքում աջակցություն Հայաստանի անվտանգությունը»:

Մինչդեռ որոշ փորձագետների կարծիքով այս պայմանագիրը ստորագրվելու է չեզոքացնելու համար ղարաբաղյան հակամարտությունը ուժի միջոցով լուծելու Ադրբեջանի հնարավորությունները...

Հայաստանի անվտանգությունն աջակցելու առումով Ռուսաստանի սանձված պարտավորությունները մտավախության պատճառ են դարձել Բաքվի փողոցներում...

Այդ ընթացքում սկսել է վիճարկվել ղարաբաղյան հիմնահարցի կարգավորման գործընթացում Ռուսաստանի անկողմնակալության պահպանման հավանականությունը:

Ենթադրվում է, որ պայմանագրի պաշտոնական ստորագրումից հետո ադրբեջանական վարչակարգը հանդես կգա հայտարարությամբ»:

Հ. Ց.

«Վատ է, որ խաղաղություն չէ, լավ է, որ պատերազմ չկա»

1-ին էջից

Դրանցից Սերժ Սարգսյանն առանձնացրեց ապագա նոր էներգաբլոկներ կառուցելու համաձայնագիրը եւ ռազմակայանի գործունեության պայմանագրի փոփոխության արձանագրությունը: «Ռուսական ռազմակայանի գործունեությունը մինչ այս սահմանափակվում էր նախկին ԽՍՀՄ-ի արտաքին սահմաններով, իսկ հիմա այդ սահմանափակումը հանված է համաձայնագրի տեքստից: Ռուսական կողմը պարտավորություն է ստանձնել համատեղ աջակցելու Հայաստանի հանրապետության ռազմական անվտանգությունը եւ աջակցելու մեր զինված ուժերը ժամանակակից զինատեսակներով հագեցնելու գործում», պարզաբանեց Հայաստանի նախագահը:

Ռուսաստանը Հայաստանի տնտեսությունում հիմնական օտարերկրյա ներդրողն է, նրան է բաժին ընկնում բոլոր արտասահմանյան ներդրումների 60 տոկոսից ավելին:

Այս հարցերի հետ մեկտեղ նախագահները քննարկել են նաեւ միջազգային ու տարածաշրջանային խնդիրներ: Ինչ վերաբերում է հակամարտություններին, ապա Սերժ Սարգսյանն ընդգծեց. «Ճգնաժամերն ու հակամարտությունները պետք է լուծվեն բացառապես, կրկնում եմ, բացառապես խաղաղ միջոցներով, առանց ուժի կիրառման կամ ուժի կիրառման սպառնալիքի, միջազգային նորմերի խստիվ պահպանմամբ, այնպիսի ձեւաչափերի շրջանակում, որոնք վերջին ժամանակներս կիրառվում են: Ես շնորհակալ եմ ՌԴ նախագահին՝ տարածաշրջանում ուժերի հավասարակշռության՝ սադրանքներ թույլ չտալու եւ ռազմամոլ հավակնությունների զսպման կարեւոր գործոնի նշանակության ըմբռնման համար: Այն ամբողջովին համապատասխանում է ԼՂ հակամարտության կարգավորման հարցում մեր դիրքորոշմանը»:

Սարգսյանը հաստատեց, որ Հայաստանը պատրաստ է ղարաբաղյան խնդրի լուծման կառուցողական որոնմանը՝ Սանկտ Պետերբուրգում կայացած եռակողմ հանդիպմանը Դմիտրի Մեդվեդեւի ներկայացրած առաջարկների հիման վրա:

Ռուսաստանի նախագահն, իր հերթին, ընդգծեց, որ բազմաթիվ երկկողմ եւ բազմակողմ հանդիպումների դինամիկան վկայում է Հայաստան-Ռուսաստան առանձնահատուկ հարաբերությունների ռազմավարական գործընկերության եւ դաշնակցային բնույթի մասին: Արդեն իսկ նշված կարեւոր հարցերի կողքին Մեդվեդեւն ավելացրեց տրանսպորտային ուղիների առնչությամբ քննարկումները, շեշտելով, որ այդ հարցերը Հայաստանի համար կարեւոր նշանակություն ունեն:

Պատասխանելով հարցին, թե ԼՂ բնակչության անվտանգության սպառնալիքի դեպքում ինչպե՞ս կարձագանքի Ռուսաստանը, Դմիտրի Մեդվեդեւը վստահեցրեց, որ իր գլխավորած երկիրը կարեւորում է Հարավային Կովկասում խաղաղության պահպանման խնդիրն ու պատերազմական գործողությունների վերսկսման անթույլատրելիությունը: Միեւնույն ժամանակ ՌԴ նախագահը հիշեցրեց. «Ռուսաստանի խնդիրը այս տարածաշրջանում խաղաղության եւ կարգի պահպանումն է, բայց մենք ունենք նաեւ ՀԱՊԿ երկրների առնչությամբ պարտավորություններ: Ռուսաստանը լուրջ է վերաբերվում իր դաշնակցային պարտավորություններին»:

Ինչ վերաբերում է ԵԱՀԿ Մինսկի խմբի ձեւաչափի փոփոխության հնարավորությանը, Մեդվեդեւի խոսքերով, առայժմ Մինսկի խմբի շրջանակներում է միայն, որ ատաստանի արդյունավետություն է գրանցվում: Ըստ Մեդվեդեւի՝ եթե կողմերի համար ընդունելի լինի Մինսկի խմբում նոր անդամների ներգրավումը, ապա Ռուսաստանը դա կընդունի որպես փաստ:

Հայաստանի նախագահի ներկայացմամբ՝ Հայաստանը կտրական է եղել իր հայտարարություններում, որ Մինսկի խմբի ձեւաչափն ամենաընդունելին է: Խոսելով Մինսկի խմբի արդյունավետության մասին՝ Սերժ Սարգսյանը հիշեցրեց, որ շատ հաճախ կիրառվում է «ո՛չ խաղաղություն, ո՛չ պատերազմ» արտահայտությունը: «Վատ է, որ խաղաղություն չէ: Բայց լավ է, որ պատերազմ չկա», ասաց Սերժ Սարգսյանը՝ նշելով, որ պատերազմի բացակայությունը հենց Մինսկի խմբի ջանքերի արդյունք է:

AZG NEW PDF.qxd 20/08/2010 20:16 Page 1

Ստանախօս աշխարհին ծանօթացնելու համար

Հայկական հարցը

Գոկս. Փասքուալ Օհանեանի կոթողային գիրքը

Նորութիւն ըսած չենք ըլլար, եթէ գրենք, որ Հայկական հարցի (մասնաւորաբար ցեղասպանութեան) ծանօթացման, բացատրութեան եւ լուսաբանումին նուիրուած բաւական հարուստ մատենագրութիւն կայ գրուած մասնաւորաբար՝ անգլերէն եւ ֆրանսերէն լեզուներով, բացի անշուշտ հայերէնով գրուած հսկայական գրականութենէն, սակայն սպաներէն լեզուով համեմատաբար հազուագիւտ են հրատարակուած աշխատութիւնները, եւ հետեւաբար բաւական աղքատ է սպաներէն մատենագրութիւնը՝ ինչ կը վերաբերի Հայկական հարցին, անոր ծագումին եւ պատմական զարգացումին, հայերուրէ յարաբերութիւններու հանգուցային հանգրուաններուն, միջազգային հաղորդակցութեան մէջ եւ միջ-պետական յարաբերութիւններուն մէջ ունեցած անդրադարձներուն, վերջապէս՝ հայոց ցեղասպանութեան, անկախ պետականութեան տեղծման (1918), եւ յետ Եղեռնի հայկական շարունակուող պահանջատիրութեան:

Չենք ըսեր, որ գոյութիւն չունի սպաներէնով գրուած այսպէս ըսած՝ քարոզչական գրականութիւն: Կան անշուշտ հայերէնէն կամ օսար լեզուներէ թարգմանուած կարճաշունչ կարգ մը գործեր՝ ոչ ուղղակի նուիրուած Հայկական հարցի սպառիչ ուսումնասիրութեան, այլ հայոց պատմութեան եւ հայ մշակոյթի պատմութեան, գրականութեան (Աշոտ Արծրունի, Ճորճ Պուրնութեան, Հրանդ Թորոսեան, Պերճ Աճեմեան, Վարդան Մաթէոսեան, Պետրոս Հաճեան), եւ ուղղակի քարոզչական առաջադրանքներով հրատակուած գործեր (Նելիսա Պուլղուրճեան, Ազատուհի Թըլսըմեան, Դանիէլ Գարամանուկեան, «Ուրարտու» Հրատ, Հարաւային Ամերիկայի Հայ դատի մարմնին հրատարակած գրքոյկները, Ժան Փիեռ Ալէմ, Մարիանօ Սարավիա, Կարլոս Տերեզեան, եւն) յուշագրութիւններ կամ վկայութիւններ (Գէորգ Սարաֆեան, Փոլ Լեվերքուէն, տոքթ. Էտուրասօ Պետրոսեան, Աւուրդա Մարտիկեան, Մորգընթաու, Ռաֆայէլ դէ Նոկալէս, այս վերջինը ոչ-հայանպաստ), որոնք մասնակի կերպով կ'անդրադառնան հարցի այս կամ այն երեսին, հանգրուանին, եւ ընդհանրապէս կը կեդրոնանան 1915 թուականի ցեղասպանութեան հասստատումին, հետեւանքներուն, հայկական պահանջատիրութեան եւ այլն: Յիշուած անուններէն զատ թերեւս կան նաեւ ուրիշ գործեր, որոնց ծանօթ չենք եղած կամ կը խուսափին մեր յիշողութենէն : Այս բոլոր հրատարակութիւնները չեն դադրիր անշուշտ գնահատելի փորձեր ըլլալէ, այսուհանդերձ բաւարար չեն ամբողջական կերպով եւ բազմակողմանի երեսներով ներկայացնելու Հայկական հարցը՝ աշխարհի մը, որ կը հաշուէ աւելի քան 350 միլիոն մարդկային զանգուած մը, հաշուելով մանաւանդ Հարաւային Ամերիկայի երկիրները, որոնց շարին՝ Արժանթին, Ուրուգուայ, Չիլէ, Վենեզուելա, Մեքսիկա, ուր գոյութիւն ունին մեծաթիւ կամ փոքրաթիւ հայ գաղութներ:

Աւելցնենք, որ սպաներէն լեզուով հրատարակուած վերոյիշեալ գործերուն վրայ վերջերս աւելցաւ շատ կարեւոր հրատարակութիւն մը՝ գերմանացի միսիոնար Յոհաննէս Լեփսիուսի «Գերմանիա եւ Հայաստան 1914-1918» գործը նախաձեռնութեամբ գերմանագէտ տոքթ. Անահիտ Պարիկեանի: Այս խիստ շահեկան գրքին պիտի անդրադառնանք առնաձնաբէս:

Հարաւային Ամերիկայի պարագային՝ պէտք չէ մոռնանք Պրազիլը, որուն լեզուն փորթուկալերէն է, եւ որքան գիտենք, այս լեզուով եւս Հայկական հարցը շօշափող ուշագրաւ գործեր չկան ցարդ, կամ շատ անբաւարար ծաւալով (մեզի ծանօթ է միայն Նուպար Խրիմեանի համեստ աշխատասիրութիւնը՝ նուիրուած Հայկական Հարցի ամփոփ պատմութեան եւ ծանօթացման):

Արդ, շեշտելով անհրաժեշտութիւնը սպաներէն (նաեւ՝ փորթուկալերէն) լեզուով գրականութեան մը կարիքին՝ անպայման չենք առաջնորդուիր հարցին մօտենալով միմիայն դէպի դուրս ուղղուած քարոզչական նպատումներով, այլ կայ նաեւ ներհայկական պահանջ մը: Այս վերջին պարագան, ըստ մեզի, այնքան կարեւոր է, որքան դէպի դուրս կատարուող քարոզչութիւնը, նոյնիսկ՝ աւելի՛ առաջնահերթ, իբրեւ աշխատանքի դաշտ եւ անմիջական հրամայական :

Այս գծով կարելի է նկատի ունենալ հետեւեալ պարագաները.-

ա) Հարաւային Ամերիկայի մէջ կ'ապրի աւելի քան 100 հազար հաշուող հայ զանգուած մը, որուն աւելի քան 80 տոկոսը՝ սպանախօս երկիրներու մէջ (մնացեալը Պրազիլ, որուն լեզուն փորթուկալերէն է):

բ) Չափազանցած չենք ըլլար, եթէ յայտնենք, որ այս զանգուածին նուազագոյն 90 առ հարիւրը, այսօր օտարախօս է եւ անծանօթ՝ հայերէնին, հետեւաբար նաեւ, ընդհանրապէս անծանօթ ըլլալով անգլերէն կամ ֆրանսերէն լեզուներուն, չի կրնար օգտուիլ այս լեզուներով գրուած եւ հայ կանին ու հայկական հարցերուն անդրադարձող գիրքերէն:

գ) Որքան ալ սպանախօս կամ փորթուկալախօս՝ Հարաւային Ամերիկայի հայերը բացառիկ հետաքրքրութիւն ցոյց կուտան իրենց ազգային ծագումին, հայոց պատմութեան, Հայաստանին, Հայկական հարցին պատմական հոլովոյթին, ցեղասպանութեան եւ պահանջատիրութեան եւ վերջապէս բոլոր այն իրողութիւններուն հանդէպ, որ աղերս ունին հայ կեանքին ու ճակատագրին հետ:

դ) Նկատի ունենալով այս իրողութիւնը, ինչպէս նաեւ այն հանգամանքը, որ Մեծաւոր Արեւելքի հայահոծ գաղութներու եւ Հայաստանի մէջ ընդհանրացած լեզուներ չեն սպաներէնն ու փորթուկալերէնը, այս լեզուներով հրատարակութիւններ շատ քիչ եղած են եւ հետեւաբար հայաճանաչման գծով տարիներու ընթացքին ստեղծուած է ուշագրաւ ամլութիւն մը, որմէ կրկնակիօրէն կը տուժէ հայապահպանումի աշխատանքը:

ե) Անհրաժեշտ է ուրեմն այս զանգուածին տրամադրութեան տակ դնել իրեն մատչելի լեզուով գրուած կամ թարգմանածոյ նիւթեր՝ ըլլայ հայոց պատմութեան, հայ մշակոյթին ու գրականութեան եւ ըլլայ մասնաւորապէս Հայկական հարցին եւ անոր տարբեր հանգրուաններուն մասին:

Ազգային ինքնութեան պահպանումին, ազգային ոգիի եւ գիտակցութեան ուժեղացումին, ինչպէս նաեւ նոյնի՛նքն մեր պահանջատիրութեան յարատեւ վերանորոգումը եւ սերունդէ-սերունդ շարունակականութիւնը ապահովելու տեսակէտէն խիստ կենսական նշանակութիւն ունի դէպի ներս ուղղուած այս քարոզչութիւնը:

Այս տեսանկիւնէն դիտուած՝ շնորհաւորելի եւ մեծապէս օգտաշատ գործ մը կատարած է դոկտ. **Փասքուալ Օհանեան**ը իր **«Հայկական հարցը եւ միջազգային յարաբերութիւնները»** ծաւալուն աշխատասիրութեամբ, որուն վեցերորդ հատորը լոյս տեսաւ վերջերս, Պուէնոս Այրէսի «Ագեան» տպարանէն, հովանաւորութեամբ Հայաստանի գիտութիւններու ակադեմիային:

Վերջին այս գրքի էջերը գումարելով նախորդ հինգ հատորներուն վրայ, աշխատութեան ընդհարուր ծաւալը կը հասնի 5600 էջնոց պատկառելի հետազօտութեան մը, որ կը սկսի 1839-ի յայտնի Թանզիմաթէն՝ հասնելու համար մինչեւ Հայաստանի խորհրդայնացումը (1920): Իր գործին մէջ Օհանեան կանգ կ'առնէ յիշեալ 80 տարիներու ճակատագրական, բախտորոշ, աղետալի կամ հերոսական բոլոր պատմական հանգրուաններուն վրայ, որոնց բովէն ու փոթորիկէն անցաւ Հայկական հարց կոչուող եւ ցարդ անլոյծ մնացած համազգային մեր խնդիրը.- Ազգ. Սահմանադրութեան հռչակում, հայ կուսակցութիւններու հիմնադրութիւն, 1896-97-ի կոտորածներ, ֆեդայական շարժում, 1908-ի Օսմանեան սահմանադրութեան հռչակում, 1909-ի ջարդեր, Համաշխարհային Ա. պատերազմ եւ ցեղասպանութիւն, Ցարական կայսրութեան տապալում (1917), վերջապէս Հայաստանի անկախութեան ստեղծում (1918) եւ հայ պետականութեան կազմաւորում, դաշնագիրներ, դիւանագիտական եւ ռազմական գործողութիւններ, թուղթեր, փաստաթուղթեր, վկայութիւններ, խոստումներ ու դժուններ, վերջապէս միջազգային արխիւներէն քաղուած բազմաբնոյթ վաւերագիրներ, անդրմէջ: Հաշուի առնելով Օհանեանի կոթողական գործը՝ Հայաստանի Գիտութիւններու ակադեմիան իրեն շնորհած է պատուոյ դոկտորի տիտղոսը:

Պարզ եւ ամփոփ պատկերացում մը տալու համար հեղինակի այս գործին մասին, որ ակադեմական մակարդակի պատկառելի աշխատութիւն մըն է, այստեղ կ'ընդգծենք հետեւեալ քանի մը կէտերը.-

ա) «Հայկական հարցը եւ միջազգային յարաբերութիւնները» գործը կ'ընդգրկէ երկու հանգրուաններ: Առաջին, երկրորդ եւ երրորդ հատորները կը սկսին 1839-ի Խաթթը Շերիֆով (Թանզիմաթ) հռչակուած սուլթանական հրամանագիրէն, որ կը կատարէր Օսմանեան կայսրութեան ներքին բարեկարգումներ եւ կը հասնի մինչեւ Ցարական կայսրութեան տապալումը, 1917: Այս բաժնին մէջ, ի միջի այլոց, լայնօրէն կը խօսուի Սելանիկի ժողովին մէջ ծրագրուած եւ թուրք պետութեան կողմէ կազմակերպուած 1915 թուականի ցեղասպանութեան մասին:

բ) Երկրորդ հանգրուանի չորրորդ , հինգերորդ եւ վեցերորդ հատորները կ'ընդգրկեն 1918, 1919 եւ 1920 տարիներու իրադարձութիւնները, անդրկովկասեան իրավիճակը, Սէյմ, Սարդարապատի, Բաք Աղարանի ճակատամարտներ, Փարիզի Ազգային ժողով, 1919-ի վերաշինուող Հայաստանը՝ տարածքային ընդարձակման մեծ յոյսեր, մեծ տէրութիւններու խոստումներ, անկախ Հայաստանի արտաքին քաղաքականութիւն, Մուսթաֆա Քեմալի շարժում, որ կը ձգտի շարունակել ցեղասպանութիւնը, այնուհետեւ 1920-ին հրարու յաջորդող դէպքերը՝ Սեւրի դաշնագիր, Ուիլսընի իրաւարարական վճիռը, Գարապէքիրի արշաւը Հայաստանի դէմ, Ալեքսադրապոլի անկումը, վրացական լարախաղացութիւններ, Կարմիր բանակի էջմը Կովկաս, կամաւորներու մուտք Կիլիկիա, Մարաշ, Այնթաբ, Հաճնոյ ինքնապաշտպանութիւնը, եւ հայ ժողովուրդի ու Հայաստանի հանդէպ արեւմտեան տէրութիւններու կողմէ ցուցաբերուած խոստմնադրուժ կեցուածքը, եւ ի վերջոյ անկախ Հայաստանի կառավարութեան իշխանութեան յանձնումը բոլշեւիկներուն:

գ) Ըստ հեղինակին կողմէ որդեգրուած իւրայատուկ սկզբունքին, այս վերջին երեք տարիներու պատմութիւնը կը կառուցուի ամիս առ ամիս արձանագրելով Հայաստանի եւ շրջակայ երկիրներու, Ղարաբաղի եւ Մեծաւոր Արեւելքի ընդհանրապէս ազգային եւ միջազգային, քաղաքական, միջ-պետական, դիւանագիտական բոլոր կարեւոր իրադարձութիւնները, ինչպէս նաեւ ցեղասպանութեան ենթարկուած արեւմտահայութեան վերադարձի ճիգերը, Կիլիկիոյ հայկական շարժումները, ֆեմալական Միլլի շարժումի սկզբնական քայլերը, ցեղասպաններու Պոլսոյ դատավարութիւնը, Գարեգին Նժդեհի զանգեզուրեան նախաձեռնութիւնը, հայկական զոյգ պատուիրակութիւններու գործունէութիւնը, ինչպէս եւ արեւմտեան դաշնակից պետութիւններու քաղաքական շրջափոխութիւնները, հայութեան պահանջներուն հանդէպ ուրացողական կեցուածքները, եւայլն,եւայլն:

դ) Պէտք է ըսել, որ հեղինակին հիմնական սկզբունքն է խօսիլ վաւերական վկայութիւններով, փաստաթուղթերով, պետական միջազգային դէմքերու, հայ թէ օսար դիւանագէտներու յայտարարութեանց մէջբերումներով, ինչ որ իր գործը կը դարձնէ առարկայական ժամանակագրութիւն մը, աւելի ճիշդ՝ փաստագրական հաւաքածոյ մը:

ե) Մասնաւորապէս գնահատելի է Օհանեանի ճիգը՝ օգտուելու համար շարք մը երկիրներու պետական արխիւներէն, երկիրներ, որոնք գործօն կերպով դերակատար եղած են Համաշխարհային Ա. պատերազմին, ինչպէս Ֆրանսա, Անգլիա, Միացեալ Նահանգներ, Իտալիա, որոնց արտաքին գործոց արխիւներէն հանած է Հայկական Հարցին վերաբերող փաստաթուղթեր եւ վկայութիւններ, գաղտնի ժողովներու վաւերագրեր, պետական մարդոց յայտարարութիւններ: Այդ թուղթերը կը խօսին միջազգային այն ծաւալուն լրումին եւ անտարբերութեան մասին, չըսելու համար դաւաճանութեան, որոնց զոհ գնաց հայոց արդար դատը, հակառակ հայ ժողովուրդի ծառայութիւններուն իբրեւ «փոքր դաշնակից» եւ հակառակ այս ուղղութեամբ կատարուած պաշտօնական խոստումներուն:

զ) Անշուշտ անկարելի է այստեղ մի առ մի յիշել բոլոր այն քաղաքական, դիւանագիտական, ռազմական դէպքերն ու դրուագները, որոնք իրարու կը յաջորդեն 1918-20 տարիներու ընթացքին, այնքան համապարփակ են անոնք եւ չեն սահմանափակուիր միայն Հայաստանի եւ հայ կեանքի շրջագիծին մէջ, այլ Օհանեան իր տեղեկատուութիւնը կը ծաւալէ նաեւ թէ՛ շրջակայքի երկիրներուն, թէ՛ Մեծաւոր Արեւելքի եւ թէ միջազգային ընդհանուր իրավիճակի բացայայտումին վրայ, այս ձեւով աւելի յստակօրէն պարզաբանելու համար Հայաստանին վիճակուած կացութիւնները:

է) Ի վերջոյ արձանագրենք, որ թէեւ հեղինակը կը խօսի հիմնուելով փաստաթուղթերու վրայ, այսուհանդերձ իր եզրայանգումները կրնան առաջնորդել տարբեր խորհրդածութեանց, տարբեր տեսակէտներու պարզումի, անկասկած նաեւ բանավէճի կամ տարակարծութեանց, ինչ որ բնական է եւ անխուսափելի:

Հիմնականն այն է, որ հեղինակը անայլայլ ջատագովն է արդարութեան պաշտպանութեան, մարդկային իրաւունքներու յարգումին, հայկական պահանջատիրութեան եւ ցեղասպան պետութեան պատասխանատուութեան միջազգային ճանաչումին: Հեղինակային այս սկզբունքը տող առ տող կը հաստատուի եւ կը վերահաստատուի վեց հատորներու մէջ, եւ եթէ Օհանեան մասնաւոր հակում ունի խօսելու եւ գրելու վաւերաթուղթերու ընդմէջէն, եթէ կը նախընտրէ առարկայական դատումներն ու փաստերը, ապա իր գլխաւոր առաջադրանքն է վերեւի սկզբունքը՝ Թուրքիա ծրագրած է հայոց ցեղասպանութիւնը եւ միջազգայնօրէն պէտք է արժանանայ համապատասխան վերաբերումի: Այս համոզումը Օհանեանի համար գաղափարական ելակէտ է, եւ այդ ուղղութեամբ ան նստած ու շարադրած է 5600 էջերու հսկայական վաւերագրութիւն մը:

Մտաւորական եւ հասարակագիտական այս համոզումին արդիւնք է նաեւ Օհանեանի ուրիշ մէկ աշխատութիւնը, որ կը կոչուի « Թուրքիա՝ ցեղասպան պետութիւն, 1915-1923» եւ որ լոյս տեսաւ 1986-ին: Այս գործին մէջ եւս հեղինակը բազմաթիւ վաւերաթուղթերով կը պնդէ, որ Թուրքիա ծրագրեց եւ գործադրեց հայերու ցեղասպանութիւնը, որով եւ ապահայացուց Արեւմտահայաստանի գրեթէ ամբողջ տարածը: Յիշենք, որ շարքի առաջին երեք հատորները լոյս տեսած են 1975-ին, 1986-ին եւ 1990-ին, չորրորդ հատորը՝ 1994-ին հինգերորդը՝ 2005-ին, իսկ վեցերորդը եւ վերջինը՝ այս տարի:

Այսօր, Սփիւռքի մէջ, Հայկական հարցի գիտական մեկնաբանումին, ծանօթացման եւ արդարադատութեան հետապնդումին նուիրուած աւելի քան 30 դէմքերէն մէկն է դոկտ. Փասքուալ Օհանեան ու գրեթէ միակը՝ որ սպաներէն լեզուով կը ծառայէ ազգային մեր դատին:

Համազգային արժեւորումի եւ գնահատանքի արժանի վաստակ մը:

ՊԵՏՐՈՍ ՀԱՃԵՆ
Պուէնոս Այրէս

AZG NEW PDF.qxd 20/08/2010 20:15 Page 1

Թուրքիայում իշխանություն-ընդդիմություն պայքարն ընթանում է փոխադարձ վիրավորանքներով

Թուրք գործիչները չեն դադարում որպես վիրավորանքի միջոց օգտագործել հակառակորդի «հայկական» ծագումը

Թուրքիայում իշխանությունընդդիմություն պայքարի հիմնական դերակատարները «Արդարություն եւ բարգավաճում» ու Ժողովրդա-հանրապետական կուսակցություններն են: Սրանցից առաջինը, որի գլխավոր նախագահը վարչապետ Էրդողանն է, լինելով իսլամամետ, փորձում է վերանայել Թուրքիայում տասնամյակների վաղեմություն ունեցող արտաքին քաղաքական կողմնորոշումը եւ երկրում կատարել կառուցվածքային փոփոխություններ՝ ընդհուպ բանակի դերի նվազեցումը:

Երկրորդը՝ «Իթթիհադը վե թերաքիի» իրավաժառանգորդի համարում ունի, լինելով իթթիհադականներով շրջապատված Քեմալ Աթաթուրքի քաղաքական կազմակերպությունը, 1923-ից մինչեւ 1950-ը միանձնյա իշխել է երկրում: Քանի որ այս կուսակցությունը ներկայացնում է էթնիկական ազգայնականությունը, անկախ Թուրքիայում տեղի ունեցող իշխանափոխություններից, բյուրոկրատիայի միջոցով մշտապես իր ձեռքում է պահել իշխանության կառույցների կառավարումն ու վայելել է բանակի անվերապահ աջակցությունը, ուստի Թուրքիայում սաստուս էվոյի պահպանման մղումով հակադրվում է կառուցվածքային ամեն մի փոփոխության:

Այլ կերպ, «Արդարություն եւ բարգավաճում»-Ժողովրդա-հանրապետական կուսակցությունների պայքարը Թուրքիայում սանում է կառուցվածքային փոփոխության կողմնակիցների եւ դրա հակառակորդների բախման բնույթ, իսկ բախումը ենթադրում է միմյանց դեմ անխիթ բոլոր միջոցների երկուսեք օգտագործումը՝ խախտելով քաղաքական էթիկայի տեսանելի եւ անտեսանելի սահմանները:

Խոսքը տվյալ դեպքում փոխադարձ վիրավորանքների մասին է: Թերեւս կարելի էր չանդրադառնալ դրանց, եթե այս երկու կուսակցությունների ներկայացուցիչները միմյանց վիրավորելու համար որպես միջոց այս կամ այն գործչին հայկական ծագում չվերագրեին եւ Թուրքիայում հայ լինելը նույնիսկ քաղաքական շրջանակներում հայհոյանքի միջոց չդառնար:

Ինչպես հայտնի է, 2008-ին Ժողովրդա-հանրապետական կուսակցության պատգամավոր Ջանան Արըթմանը, վիրավորելու համար Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլին, հայտարարել էր, թե նախագահի մայրը հայ է: Ի դեպ, Գյուլը իսկույն արդարացել էր, թե դա սուտ է, թերեւս դրանով էլ տուրք էր տվել երկրում հայ լինելը որպես վիրավորանք օգտագործելու դրսեւորումներին: Եթե նույնիսկ Արըթմանը ճիշտ լիներ, միեւնույնն է, Գյուլը դրանով հայ չէր դառնա, որովհետեւ թուրքական ընտանիքում ծնված երեխան ոչ հայերեն է իմանում, ոչ առնչվում է հայկական մշակույթին, ոչ էլ հայի ինքնագիտակցություն է ունենում: Իսկ թուրքը հազիվ թե կոտոր ունենա: Ի դեպ, օսմանյան բոլոր սուլթանները եղել են թուրք, ծնված լինելով, անխիթ բոլորը, ոչ թուրք մայրերից:

Համենայն դեպս, օգոստոսի 18-ին էլ Անկարայի քաղաքապետ Մելիհ Գյոկչեքը, որը «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության ներկայացուցիչն է, հեռուստաէկրանից հայտարարել է, որ Ժողովրդա-հանրապետական կուսակցության նորընտիր գլխավոր նախագահ Քեմալ Քլըչդարօղլուի մայրը իբր հայ է: Ինչպես «Հաբերթուրք» կայքէջն է նշում, նա այնուհետեւ ավելացրել է. «Նա չի ժխտում իր մոր հայ լինելը, թեեւ կարեւորը Եմուշ խանումի հայ լինելը չէ: Ինքը՝ Քլըչդարօղլուն դավանանքով ալավի է: Երբ նրան հարցնում են՝ հայ է, թե ոչ, խոսքը կտուրն է գցում: Մինչդեռ Թուրքիան դեմոկրատական երկիր է, ոչ ոք իրավունք չունի քողարկելու էթնիկ ծագումն ու դավանանքը»:

Գյոկչեքի այս խոսքերը բուռն հակազդեցություն են առաջ բերել ժողովրդահանրապետականների շրջանում: Նրան դատապարտել են նաեւ կուսակիցները, բայց ոչ թե հայկական ծագումը իբրեւ վիրավորանքի միջոց օգտագործելու, այլ մորը հայկական ծագում վերագրելով՝ Ժողովրդա-հանրապետական կուսակցության նախագահին վիրավորելու համար:

Հ. ՉԱՔԲԱՆ

Հայկական ուսումնասիրությունները՝ հրապուրիչ բնագավառ

Երուսաղեմից Արթուր Հակոբյանը գրում է եբրայական համալսարանի հայագիտական բաժնում իրականացված փոփոխությունների եւ ծրագրերի մասին:

Հայ ժողովրդի լեզուն, գրականությունը, պատմությունն ու մշակույթը միշտ էլ ուսումնասիրությունների հրապուրիչ բնագավառ են եղել օտար գիտաշխատողների համար: Աշխարհի այս մասում նրանց ընձեռված հնարավոր կրթօջախների թվում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում Երուսաղեմի եբրայական համալսարանն իր հայագիտական ուսումնասիրությունների բաժնով: Բացի այնտեղ իրականացվող դասախոսություններից եւ սեմինարներից, այդ բաժինը նաեւ մեծապես խրախուսում է հայագիտական գրքերի հրատարակությունը:

Ուսումնասիրությունների ծրագիրը, որը մոտ մեկ տարի դադարեցվել էր դոկտ. Սերխիո Լա Պորտայի մեկնումի հետեւանքով, այժմ դարձյալ վերսկսել է գործել նրան փոխարինելու եկած պրոֆ. Ժասմին Դում-Տրագուտի շնորհիվ: Ծրագրի գլխավոր հովանավորներից եւ միաժամանակ օգտվողներից է Երուսաղեմի հայկական պատրիարքարանը:

Սուրբ Հակոբի միաբանության մի շարք հոգեւոր հայրեր մեծ հաջողությունների են հասել այդ համալսարաններում: Նրանցից վերջինը հայր Բագրատ Բուրճեկյանն է, որ իր մագիստրոսի ատենախոսությունն ստանալուց հետո աշխատում է դոկտորականի վրա, պրոֆեսորներ Դյուվեն Ամիթայի եւ Մայքլ Սթոունի ղեկավարության ներքո: Հայր Բագրատը պատրիարքարանի անշարժ գույքի բաժնի պատասխանատու ղեկավարներից է:

Հայր Բագրատ Բուրճեկյան

Դոկտ. Սերխիոն ավելի քան տասը տարի աշխատել էր Երուսաղեմում, իսկ այժմ տեղափոխվել է Ֆրեզնո (Կալիֆոռնիա)՝ ստանձնելու Կալիֆոռնիա պետհամալսարանի հայկական ուսումնասիրությունների ամբիոնի վարիչի պաշտոնը: Նրա փոխարինող պրոֆ. Դում-Տրագուտը բարձրակարգ մասնագետ է, հայագետ, որն իր երկրորդ դոկտորականն է ստացել Լեյդեն համալսարանից: Նոյեմբերին եւ դեկտեմբերին նա հայ ժողովրդի պատմության եւ մշակույթի ինտենսիվ կուրս է կարդալու եբրայական համալսարանում:

Ըստ որոշակի աղբյուրների՝ համալսարանի հայկական ուսումնասիրությունների այս ծրագիրը մեծ ժողովրդականություն է վայելում ինչպես տեղացի, այնպես էլ օտար ուսանողների շրջանում: Հրավիրված դասախոսների թվին են պատկանել պրոֆ. Թեո վան Լինտը (Օքսֆորդի համալսարանից), Ջեյմս Ռասելը (Հարվարդի համալսարանից):

Դում-Տրագուտն ավելի վաղ՝ այս տարի եղել էր Երուսաղեմում՝ ուսումնասիրելու Հին քաղաքի հայկական համայնքի (այսպես կոչված «քաղաքացիների») բարբառն ու մշակութային ավանդույթները: Սա մի ծրագիր էր, որ տասը տարի առաջ պրոֆ. Սթոունն էր նախաձեռնել Իսրայելի եւ Հայաստանի գիտությունների ակադեմիաների հովանու ներքո: Ծրագիրը կարեւորվում է այն հանգամանքով, որ «քաղաքացիների» ավագ սերնդի ներկայացուցիչների վախճանումով անհետանում են անցյալի խիստ արժեքավոր ավանդույթներն ու բարքերը, որոնց պահպանման եւ հաջորդ սերունդներին փոխանցման համար անհրաժեշտ են անմիջական քայլեր:

Այդ քայլերից մեկն էր սկավառակների վրա փոխանցել «քաղաքացիների» պատմությունները: Ծրագիրն այժմ վերագործարկվում է Իսրայելի եւ Հայաստանի գիտությունների ակադեմիաների աջակցությամբ: Մյուսն այդ պատմությունները օնլայն փոխանցելն էր: Այժմ գործում է www.kaghakatzi.org կայքը:

Ինչպես գիտաշխատողներից մեկն էր ասում. «Առանց հայերի, Երուսաղեմը չոգեշնչող հետնախորհի կնմանվեր»: Իրոք այդպես է: Բայց հայերն այնտեղ են եւ մյուսների՝ արաբների, հրեաների, հույների, բեդվինների եւ այլոց հետ կլինեն այնտեղ առհավետ:

Թարգմ. Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆԸ

ՄԱԿ-Ի ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՏԱՐԱՆ

Կառլա դել Պոնտեն կասկածվում է վկաների ահաբեկման եւ կաշառման մեջ

Նախկին Հարավսլավիայի հարցերով զբաղվող ՄԱԿ-ի միջազգային դատարանը քննություն է սկսել նախկին դատախազ Կառլա դել Պոնտեի գործով: Լոնդոնի «Գարդիան» թերթը հաղորդում է, որ դել Պոնտեն կասկածվում է վկաների ահաբեկման եւ կաշառման, ինչպես նաեւ վկայական ցուցմունքների նենգափոխման մեջ:

Քննություն է սկսվել նույն դատարանի եւս երկու դատախազների՝ Դանիել Սմոլոնի եւ Հիլդեգարդ Յուրգ-Ռեցլաֆի նկատմամբ: Սա այս կարգի առաջին դեպքն է միջազգային դատարանի 17-ամյա գոյության ընթացքում:

Քննության առիթը վկաների գանգատներն են պատերազմական հանցանքների մեջ կասկածվող սերբ արմատական գործիչ Վոյիսլավ Շեշելի գործի առնչությամբ: Վկաները մասնավորապես հայտարարել են, որ քննիչները ճնշում են գործադրել իրենց վրա, սպառնացել են, իսկ որոշ դեպքերում փող են առաջարկել ցուցմունքներ տալու դիմաց:

Վկաներից մեկը պնդում է, որ մեղադրական կողմին անհրաժեշտ ցուցմունքներ տալու դիմաց իրեն առաջարկել են բարձր վարձատրվող աշխատանք ԱՄՆ-ում: Բայց ավելի հաճախ վկաները գանգատվում են ահաբեկումներից, շանտաժից եւ քնից զրկելու փորձերից:

Քննությունը կհանձնարարվի անկախ, հավանաբար՝ ֆրանսիական հանձնաժողովի: Աշխատանքի արդյունքները կհրապարակվեն կես տարվա ընթացքում: «Գարդիանի» տվյալներով՝ դել Պոնտեն, Յուրգ-Ռեցլաֆը եւ Սմոլոնը իրենց ներկայացված մեղադրանքները չեն ընդունել, բայց խոստացել են գործակցել քննիչների հետ:

Վոյիսլավ Շեշելը Հաագայի դատարանին ինքնակամ հանձնվել էր 2003-ին: Նրա դատավարությունը սկսվել էր 2007-ին: Դատավարության ընթացքում նա քննիչներին քանիցս մեղադրել էր խախտումների մեջ եւ վիրավորել դատախազին ու դատավորներին: Պաշտպանության վկաների անունների եւ հասցեների հրապարակումից հետո նա 15 ամսվա ազատազրկման էր դատապարտվել դատարանին չհարգելու համար:

Կառլա դել Պոնտեն Հաագայի դատարանում դատախազ է աշխատել 1999-2007 թթ.: Նա ձգտում էր դատել պատերազմական հանցանքների մեջ կասկածվող սերբ ղեկավարներին՝ Ռադովան Կարաջիչին, Ռատկո Մլադիչին եւ մյուսներին: 2008-ից դել Պոնտեն Շվեյցարիայի դեսպանն է Արգենտինայում:

Իսրայել-Պաղեստին բանակցությունները կվերսկսվեն սեպտեմբերի 2-ին

Մերձավորարեւելյան քառյակը (ԱՄՆ, ԵՄ, ՌԴ, ՄԱԿ) օգոստոսի 20-ին Իսրայելին եւ Պաղեստինին պաշտոնապես առաջարկել է վերսկսել հաշտության ուղղակի բանակցությունները: Այդ մասին հաղորդում է Ռոյթեր գործակալությունը՝ վկայակոչելով դիվանագիտական աղբյուրներ:

Նախատեսվում է բանակցությունները սկսել սեպտեմբերի 2-ին Վաշինգտոնում: Միջոցառմանը ներկա կլինի ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման: Ֆրանսպրես գործակալության տվյալներով՝ բանակցություններում Իսրայելի եւ Պաղեստինի ներկայացուցիչները կլինեն համապատասխանաբար Բենիամին Նաթանյահուն (վարչապետ) եւ Մահմուդ Աբբասը (Պաղեստինյան ինքնավարության ղեկավար):

Սպասվում է, որ Վաշինգտոնում Նաթանյահուն եւ Աբբասը կքննարկեն Արեւելյան Երուսաղեմի կարգավիճակի եւ պաղեստինցի գաղթականների վերադարձի հարցերը: Քննարկումը հավանաբար տեւի մեկ տարի:

Պաղեստին-Իսրայել ուղղակի բանակցությունները ընդհատվեցին 2008-ի վերջերին: Պաղեստինյան ինքնավարության իշխանությունները հայտարարեցին, որ չեն շփվի Իսրայելի ղեկավարության հետ, քանի դեռ չի դադարեցվել հրեական ավանների շինարարությունը Այսրհորդանանում եւ Արեւելյան Երուսաղեմում:

Արեւելյան Երուսաղեմի տարածքը պաղեստինա-իսրայելական հարաբերությունների գլխավոր փորձաքարն է: 1967-ի Վեցօրյա պատերազմի ընթացքում Իսրայելը գրավեց այդ տարածքը: Առ այսօր քաղաքի բազմաթիվ բնակիչներ ընդունել են Իսրայելի քաղաքացիություն, սակայն Պաղեստինի իշխանությունները պնդում են, որ Արեւելյան Երուսաղեմը իրավամբ պետք է պատկանի հենց իրենց:

Լուսինը փոքրանում է

Ըստ երեւույթին, Լուսնի չափերը փոքրանում են: Դրա հետքերը հայտնաբերել են ամերիկացի գիտնականները, որոնց վարկածը հրապարակվել է Science հանդեսում:

Աստղագետները Երկրի բնական արբանյակի մակերեւույթի վրա վաղուց նկատել են տարօրինակ գոյացումներ, որոնք նման են մինչեւ 10 մետր բարձրության եւ մի քանի կիլոմետր երկարության ժայռերի: Դրանք Լուսնի հասարակածի վրա են, նշում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ գործակալությունը:

Այժմ նման գոյացություններ հայտնաբերված են Լուսնի նաեւ այլ շրջաններում: Հետազոտողները եզրակացրել են, որ տարօրինակ բեկվածքների գոյացմանը հանգեցրած պրոցեսները Լուսնի վրա համատարած բնույթ են կրել:

Վաշինգտոնի ազգային տիեզերական թանգարանին կից Երկրի եւ մոլորակների հետազոտման կենտրոնի աշխատակից Թոմաս Ուոթերսը պարզաբանում է, որ Լուսնի սառչելու համեմատ նրա մանտիան եւ միջուկը սկսել են սեղմվել, առաջացնելով արբանյակի արտաքին մակերեւույթի չափերի նվազում:

Մակերեւույթի վրա գոյացել են ճաքեր եւ բեկվածքներ, որոնք էլ գրավում են գիտնականների ուշադրությունը: Ի դեպ, բեկվածքների ռելիեֆի վրա չկան մեծ խառնարաններ՝ Լուսնի ասուպային «ռմբակոծման» հետքեր:

Տվյալ հանգամանքը ամրապնդում է այն վարկածը, որ տարօրինակ գոյացություններն այնքան էլ հին չեն: «Դա վկայում է, որ Լուսինը տակավին ակտիվ է», ընդգծում է Ուոթերսը: Նրա գնահատմամբ, բեկվածքների բնույթը ցույց է տալիս, որ Լուսնի տրամագիծը նվազել է ընդամենը 100 մետրով:

Գիտնականի խոսքերով՝ հետագա սեղմումը չի հանգեցնի Լուսնի անհետացմանը եւ ոչնչով չի սպառնում Երկրին:

AZG NEW PDF.qxd 20/08/2010 20:51 Page 1

ՆԿԻՐՅԱԼԸ

Կարդ Դոմբաեւ-100

Լրացավ մեր երաժշտական աշխարհի ամենաականավոր դեմքերից, մեր ամենաբաղձալի ուսուցիչներից մեկի՝ Կարդ Դոմբաեւի (Կարաոես Սահակի Դոմբայանցի) ծննդյան 100-ամյակը:

Մի ամբողջ կյանք՝ ադրած իբրեւ ստեղծագործական սխրանք, իբրեւ մանկավարժական նվաճում, իբրեւ նվիրում մեկընդմիշտ ընտրած կոչմանը: Հսկայական հեղինակություն, խստապահանջ բարձր մասնագետ, միշտ լրջամիտ, ազնիվ ու անկաշառ:

Իր կյանքի վեց տասնամյակը նվիրելով մանկավարժությանը, ջութակի կատարողական դպրոցի ռահվիրան աշխարհին տվել է ջութակահարների մի ամբողջ համաստեղություն: 100-ից ավելի շրջանավարտներ, որոնց Կարդ Դոմբաեւն ուղեկցել է առաջին աշակերտական քայլերից մինչեւ կոնսերվատորիա, ապա եւ ասպիրանտուրա, իսկ հաճախ մնացել է նրանց համար բարձրագույն խորհրդատու եւ արդար դատավոր ողջ կյանքում: Նշենք միայն Հ. Վարդանյանին, Ա. Ցիցիկյանին, Ժ. Տեր-Մերգերյանին, Զ. Սահակյանցին, Ռ. Ահարոնյանին, Հ. Դուրգարյանին, Վ. Ջարչոդլյանին, Կ. Բաղդասարյանին, Վ. Խաչատրյանին, Վ. Բոյաջյանին, Լ. Խառատյանին, Տ. Պետրոսյանին եւ այլոց, ովքեր հայկական կատարողական արվեստը տարածեցին ամբողջ աշխարհով մեկ եւ փառաբանեցին: Ջութակահարի ձեւավորման մեթոդական հետեւողականության, տեխնիկական ու երաժշտական որակների զարգացման «դոմբաեւյան դպրոցը» հայտնի է եւ համընդհանուր ճանաչման արժանացած:

Կ. Դոմբաեւի սաները ուսուցչից սովորել են պրոֆեսիոնալիզմ, ձեւավորվել են որպես մարդ ու քաղաքացի: Մեծ էր պրոֆեսորի ազդեցությունը իր ուսանողների վրա, բայց ոչ պարտադրող: Նա հազվադեպ էր իր հայացքները, տեսակետները թելադրում, բայց բոլորին համոզում էր իր վարքով:

Տարիներ շարունակ ղեկավարում էր կոնսերվատորիայի ուսումնական ընթացքը. աշխատել է փոխտնօրեն, նվագախմբային ֆակուլտետի առաջին դեկանն էր:

Կ. Դոմբաեւը ջութակի նվագացանկը հարստացրել է հայկական երաժշտության սեփական մշակումներով: 1948 թ. հիմնել է իր տեսակի մեջ ուրույն եւ շատ արժեքավոր՝ հինավուրց լարային նվագարանների հավաքածուն:

Ոչ լավ օրերին եւ ոչ վատ՝ Կ. Դոմբաեւը չի լքել Հայաստանը, չի գայթակղվել արտասահմանյան եւ ոչ մի հրավերով: Մութ ու ցուրտ տարիներին շարունակում էր արարել: Հրատարակում էր իր «Մեթոդական խորհուրդներ Պագանինիի կապրիսները ուսումնասիրողներին» աշխատությունը:

Կարդ Դոմբաեւ մարդուն, քաղաքացուն, երաժշտին եւ մանկավարժին հատուկ էր անմնացորդ հայրենասիրությունը, մտավոր բարձր զարգացածությունը, երաժշտական-կատարողական արվեստի նորամուծություններին իրազեկությունը եւ այդպես էլ դասախարակում էր իր սաներին՝ որպես հայրենիին ու հայրենի երաժշտական արվեստին նվիրված անհատականություններ:

Տա Աստված, որ յուրաքանչյուր մանկավարժ նույնքան ազնիվ հոգի ունենա, նույնքան եռանդ ու կորով ուրտում, նույնչափ նվիրված լինի իր կոչմանն ու գործին, ինչպես Կարդ Դոմբաեւը:

ԼԱԼԱ ՆԵՐՍԵՍՅԱՆ
Ջութակահարուհի

Ալինա Խաչատրյան. «Հիշողությունների կարոտը»

(գրախոսություն)

Վերջերս լույս է տեսել հայտնի հեռուստալրագրող, «Արմենիա» հեռուստաընկերության «Հայրենիք-Սփյուռք» (եւ մի շարք այլ) հաղորդաշարերի հեղինակ եւ վարող Ալինա Խաչատրյանի այս վերնագրով հուշերի գիրքը՝ իբրեւ հաճելի մի նվեր օրավուր ընթերցանության հոգեպարար զբաղումին դեռեւս հավատարիմ զանգվածների համար: Այսօր, երբ գրեթե բոլորս դժգոհում ենք հասարակության լայն շերտերի ընթերցասիրության պակասից, Ալինա Խաչատրյանի այս գիրքը գալիս է մի տեսակ հուշելու, որ դժգոհության առանձնակի պատճառ չկա՝ ոչ թե ժողովրդի ընթերցասիրությունն է պակասել, այլ նրա հոգեւոր-մշակութային պահանջմունքները, տպագիր խոսքին ներկայացվող չափանիշներն են փոխվել: Մշակութային եւ լրատվական դաշտերում ընտրության չափազանց լայն հնարավորություններ ստացած այսօրվա քաղաքացին այլեւ իր համար շռայլություն է համարում ժամանակ վատնել իր հոգուն ու մտքին ոչինչ չտվող կամ քիչ բան տվող, առաջին իսկ էջերից իրեն չկլանող հնավանդ ընթերցանության վրա: Բայց բավական է ձեռքն անցնի տպագրյալ գրքի էջերից իր հետ մտերմիկ «զրուցող» մի գործ, որ հին օրերի նման հափշտակվի-տարվի ու գիրքը ցած չդնի ձեռքից, մինչեւ չհասնի... վերջակետին:

Ես հենց այդպես, մի շնչով էլ կարդացի-ըմբռնեցի հարգարժան գործընկերուհուս հուշերի խնդրո առարկա հատորյակը՝ տեղտեղ բարձր քրքջալով, տեղ-տեղ արցունքներից խեղդվելով, հիանալով երկար տարիների ընթացքում ինձ լավ ծանոթ հեղինակի անկեղծությամբ, պատումի անմիջականությամբ, մի քանի վրձնահարվածներով ամբողջական դիմանկարներ ստեղծելու նրա վարպետությամբ, հայերենի լեզվա-ոճական անսպառ հնարավորություններից լիուլի օգտվելու նրա զարմանալի կարողությամբ, միտքը պարզ ու դիպուկ շարադրելու բնատուր շնորհով եւ ասելիքի հստակությամբ:

Սովորական հուշապատում եւ մանավանդ՝ ինքնաթմբկահարում չէ գրախոսվող հատորյակը: Ընդամենը 160 էջանոց փոքրիկ ծավալում կենդանացած է մի ամբողջ աշխարհ, մի սերնդի՝ իմ սերնդի ադրած դառն ու դժվարին կյանքի ցնցող պատմությունը, մանկական տարիներից մինչեւ հասունության շրջան ընկած երկար տասնամյակների անմոռաց, թանկագին, հարազատ ու սիրելի դեմքերին ու դեպքերի վերակենդանացման հաջողված մի փորձ է սա, հորդահոս կարոտների մի իսկական հեղեղ:

Ալինա Խաչատրյանի ծնողների սերունդն անցել է դժնի ու դժնդակ, անսիրտ ու անհոգի ժամանակների միջով, որոնք անբուժելի վերքեր ու ավերներ են թողել տասնյակ ու տասնյակ միլիոնավոր խորհրդային մարդկանց հոգիներում: Առանց խոր ցավի չի կարելի կարդալ տիկին Ալինայի հոր՝ Սուրեն Խաչատրյանի ողբերգության պատմությունը, ում 1937-ին նետել են պեսանվսանգության մարմինների զնդանները եւ ամբողջ երկուսուկես տարի ենթարկել զարհուրելի կտտանքների, իբր այդ տաղանդավոր մեխանիզատորը ցանկացել է... «ինքնաբեն թնդանոթ կառուցել եւ հեռավոր Հայաստանի Թալին գյուղի իր տան կտուրից ռմբակոծել Մոսկվայի Կրեմլը՝ բոլշեւիկյան առաջնորդներ Մալենկովին ու Կագանովիչին (թե ինչո՞ւ միայն այս երկու հրեաներին՝ ակնհայտ է) սպանելու չարամիտ դիտավորությամբ»:

- Երբ Հայաստանի անկախացումից հետո ինձ իրավունք տրվեց ծանոթանալու հորս ադրած այդ 2,5 տարվա կյանքի ծավալուն հատորներին, որոնք թաթախված էին հորս արյան հետքերով, խելագարության հասնող անհեթեթ հարցաքննություններով,- գրում է Ալինա Խաչատրյանը,- աչքերիցս ջրի պես թափվում էին արցունքները... Այդ պահին երկրորդ անգամ էի թաղում հորս, որովհետեւ հասկացել էի նրա վախի ու լռության պատճառը: Ես ցնցվել էի նրա լռության հզորությունից: Նա իր ամբողջ հետագա կյանքն ադրել էր վախի ու հետապնդման վտանգի մեջ, բայց երբեք այդ վախն ու ատելությունը չէր փոխանցել մեզ՝ չխաթարելով մեր մանկությունն ու պատանությունը, մեր ադագան...

Սոսկալին այն է, որ «Կրեմլը Թալինի իր տան կտուրից ռմբակոծելու» բառացիորեն խելագար ամբաստանագրի հեղինակը եղել է... Սուրեն Խաչատրյանի արյունակից հարազատներից մեկը: «Սակայն դա ի՞նչ նշանակություն ունի,- հոգու խորքից ասես հառաչում է հուշագիրը,- այդ Արշավիրը չլիներ՝ մեկ ուրիշ Արշավիր կգտնվեր, շրջապատը լեցուն էր արշավիրներով, որոնց նպաստավոր պայմաններ էին պետք իրենց կեղծ հայրենասիրությունն ու իշխող գաղափարախոսությանը հավատարիմ լինելու փաստը ցուցադրելու համար...»:

Քաղաքական ընդհանրացումների մակարդակին բարձրացող այսպիսի բազում բնորոշ դիտարկումներով ծայրեծայր լի է Ալինա Խաչատրյանի հուշագրությունը: Այստեղ ե՛ւ 1946-ին խորհրդային Հայաստան ներգաղթած սփյուռքահայ խոշոր զանգվածի անպարագիծ ողբերգությունն է, որն այդպես էլ չկարողացավ հարմարվել այն ժամանակների հայաստանյան իրականությանը, Հայաստանում ադրեց՝ խորթացած եւ օտարացած, «ախպարի» պիտակը ճակատին՝ բռնեց «սիբիրների ճանապարհը», ե՛ւ բազմաթիվ իրական կերպարներ են, ովքեր մինչեւ ներգաղթելն իրենց բնակած վայրերի երբեմնի բարեկեցիկ կյանքը զոհաբերեցին միամիտ հայրենասիրությանը՝ Հայրենիքում բառացիորեն անվարտիք մեռնելու, շրջապատի թունավոր, ամբարո ծաղրուծանակին զոհ գնալու համար...

Ալինա Խաչատրյանի հուշագրությունը հենց նվիրված է «Հայաստան ներգաղթած հայերի հիշատակին», ինչպես գրել է հեղինակը իր աշխատության տիտղոսաթերթին՝ գրքի էջերից մեկում անկեղծ ներողություն խնդրելով մեր բոլոր այն սփյուռքահայ քույր-եղբայրներից, ովքեր գործնականում դարձան խորհրդային քարոզչության զոհերը՝ խաբկանք-հրապուրանքով բերվեցին լայն ներգաղթի համար միանգամայն անպատրաստ Հայաստան եւ քվեցին «թիարաններն անհաց աշխատանքի», ինչպես կասեր մեծն Չարենցը: Այդպիսի «ներողության» համար տիկին Ալինան, անկասկած, որեւէ անձնական պատճառ չունի: Ոչ ինքը, ոչ իր նախնիներից որեւէ մեկը սալինյան ոճրագործ ռեժիմի հանցակիցները չեն եղել, զոհե՛րն են եղել: Բայց որքա՞ն բարձր բարոյական նկարագիր պիտի ունենա այդ զոհը կամ զոհի ժառանգը, որ ինքն իրեն պատասխանատու զգա այն պետության մեղքերի համար, որի... շարքային քաղաքացի՞ն է եղել ընդամենը...

Անշուշտ, անպարագիծ տառապանքները չեն, որոնց... կարոտո՞ւմ է հուշագիրը (տառապանքը կարոտելո՞ւ բան է, որ... կարոտի): Նա կարոտում է իր ուրին թանկ ու հարազատ մարդկանց, իր մանկության ընկերներին, իր թեկուզեւ չարքաշ պատամությունը, երիտասարդությունը, իր ծննդավայր Երեւանի այն ժամանակվա խեղճուկրակ շենք-շինությունները, իր բազմահարուստ կենսագրության տարբեր դրվագներով անցած բազմաթիվ արժանավոր դեմքերի... Եվ այդ կարոտը պարուրում է ընթերցողին, տանում իր հետ, քնքշացնում, բարիացնում նրան...

Ալինա Խաչատրյանին կարդալիս մի անգամ եւս սրությամբ հասկանում ես, որ հուշեր գրելու համար էլ մարդ պետք է բարոյական իրավունք նվաճած լինի: Եթե գրածդ զուտ անձնական բնույթ ունի, եթե չես կարողանում բարձրանալ ինքնակենսագրությունից ու մանր կենցաղագրությունից դեպի լայն հասարակական ընդհանրացումներ, ի զորու չես տալու տեսածիդ ու ապրածիդ ընդհանրական գնահատականը, եթե քո գրածով չես նպաստում, որ ընթերցողը դասեր քաղի նաեւ ի՛ր ներկայի ու ապագայի համար, ապա...իզո՞ւր ես գրիչ վերցրել:

Գրախոսվող աշխատությունը ապացուցում է, որ հեղինակը ամենեւին էլ զուր չի գրիչ վերցրել, որ նա լիովին վաստակել է սեփական հուշերի գրքով հասարակական լայն լսարանին ներկայանալու բարոյական իրավունքը: Ահա թե ինչու հոգուս պարտքն եմ համարում ընթերցողին ջերմորեն հանձնարարել, որ կարդա Ալինա Խաչատրյանի «Հիշողությունների կարոտը»: Նա այս գրքի էջերում կգտնի իրեն վաղուցհետե ծանոթ ու հարազատ հեռուստամեկնաբանի միանգամայն նոր կերպարը եւ անհամբեր կսպասի...հաջորդ գրքին...

ՌԱՖԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Հայաստանի վաստակավոր լրագրող

Փահրադ Ափուջանյանը պարգեւատրվեց ՀՀ մշակույթի նախարարության ոսկե մեդալով

Օրերս Սպիտակում նշվեց «Լուսաբանակ» թերթի գլխավոր խմբագիր, Հայաստանի ժուռնալիստների միության վարչության անդամ Ֆահրադ Ափուջանյանի ծննդյան 60, աշխատանքային գործունեության 40-ամյա հոբելյանները, տեղի ունեցավ նրա «Արեւաշող» գրքի շնորհանդեսը, հանդիսություններ՝ նվիրված թոռնիկների մկրտությանը, Ափուջանյան տոհմի կազմավորման 210-ամյակին:

«Յուրիկ Ղազարյան» հանդիսությունների սրահում «Լուսաբանակ» թերթի եւ «Սպիտակի մտավորականներ» հկ-ի կազմակերպած միջոցառմանը (սեղանների շուրջ) մասնակցում էին պատգամավորներ, Ֆ.Ափուջանյանի գործընկերները, նրա ավանդը գնահատող շուրջ 200 սպիտակցիներ ու հյուրեր:

Միջոցառումը վարում էր դրամատուրգ, երգիծաբան, լրագրող Սամվել Խալաթյանը: Նա ջերմ բարեմաղթանքներ հղեց իր գրչեղբորը եւ ընթերցեց Լոռու մարզպետ Արամ Քոչարյանի շնորհավորագիրը:

Ֆ. Ափուջանյանին շնորհավորեցին նրա երկարամյա, բեղուն գործունեությունը գնահատողները, խոսքեր ասացին ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վոլոդյա Բաղալյանը եւ վաստակավոր իրավաբան Ռաֆայել Կարապետյանը:

ՀՀ մշակույթի նախարարության արվեստի վարչության պետ Կարո Վարդանյանը շնորհավորանքի խոսք հղելով նախարար Հասմիկ Պողոսյանի եւ իր անունից՝ նախարարության ոսկե մեդալ հանձնեց Ֆ.Ափուջանյանին:

Հայաստանի ժուռնալիստների միության նախագահ, ՀՀ հանրային խորհրդի եւ Երեւանի ավագանու անդամ Աստղիկ Գեւորգյանն իր խոսքում կարեւորեց Ֆ. Ափուջանյանի մարդկային բարձր հատկանիշները, նրա զգալի ավանդը լրագրության զարգացման ասպարեզում:

Հայաստանի ժուռնալիստների եւ գրողների միությունների Լոռու մարզային բաժանմունքների նախագահ, բանաստեղծ Մանվել Միկոյանը շնորհավորանքի իր խոսքում նշեց, որ Ֆ.Ափուջանյանը կյանքի տարբեր փուլերում զբաղեցրել է պատասխանատու պաշտոններ ու ամենուր վայելել գործընկերների սերն ու հարգանքը:

Մ. Միկոյանը մարզի գրողների եւ լրագրողների անունից ոսկե գրիչ խորհրդանշող կրծքանշան նվիրեց գրչեղբորը:

Պրոֆեսոր Հրաչյա Ոսկանյանն իր խոսքում կարեւորեց հոբելյարի հեղինակած «Արեւաշող» գրքի հրատարակումը՝ այն համարելով հանրագիտարանային արժեք ունեցող աշխատություն:

Ֆ. Ափուջանյանին շնորհավորելու էին եկել նաեւ «Թալին աշխարհ» թերթի գլխավոր խմբագիր Համլետ Խաչատրյանը, «Սեւան»», «Տուֆաշխարհ» թերթերի խմբագիրներ Պաղտ Հայրապետյանը, Անահիտ Նահապետյանը, Գյումրիից՝ Աղասի Աբրահամյանը եւ ուրիշներ:

Հոբելյարին չափածո շնորհավորանքներ հղեցին իր թոռնիկները:Երգն ու պարը, ջերմ մթնոլորտը միջոցառումը վերածեցին իսկական տոնի: Ներկաներին շնորհակալություն հայտնեց եւ օրվան համահունչ բանաստեղծություններ կարդաց Ֆ. Ափուջանյանը:

* * *

«Ազգ» միանում է վաստակաշատ լրագրողին հղված շնորհավորանքներին:

AZG NEW PDF.qxd 20/08/2010 20:15 Page 1

Ավետիք Գրիգորյանը հավակնում է գլխավոր մրցանակին

Դուբայում ավարտին է մոտենում շախմատի միջազգային մրցաշարը, որին մասնակցում են 26 շախմատիստներ: Մրցաշարի ավարտից մեկ տուր առաջ բավական խճճված իրավիճակ է առաջատարների շարքում: Եվ միայն ավարտական տուրը կանվանի գլխավոր մրցանակի տիրոջը:

Ըստ մրցումների պաշտոնական կայքի՝ 8-րդ տուրում Աշոտ Անաստասյանն անհաջողության մատնվեց: Նա սեւերով զիջեց վրացի գրոսմայստեր Զուրաբ Ստուրուային: Այս պարտությունը մեր փորձառու գրոսմայստերի համար կարող է ճակատագրական լինել գլխավոր մրցանակի համար մղվող պայքարում: Անաստասյանը 5 միավորով հանգրվանել է 4-րդ հորիզոնականում:

Տուրը հաջող էր Հայաստանի չեմպիոն Ավետիք Գրիգորյանի համար: Նա սպիտակներով հաղթեց ՖԻԴԵ-ի վարպետ, իրանցի Մոհսեն Շարբաֆին: Այս հաղթանակի շնորհիվ Գրիգորյանը վաստակեց 5,5 միավոր եւ տեղափոխվեց 2-րդ հորիզոնական: Նա այժմ ընդամենը կես միավոր է զիջում միանձնյա առաջատար, ուկրաինացի գրոսմայստեր Անտոն Կորոբովին: Վերջինս սեւերով հաշտություն կնքեց ադրբեջանցի Սարհան Ղուլիեւի հետ: 5,5 միավոր ունի նաեւ Զուրաբ Ստուրուան: Ղուլիեւը վաստակել է 5 միավոր:



Տուրն անհաջող էր հայաստանցի 3-րդ մասնակցի՝ Հովհաննես Գաբուզյանի համար: Նա սեւերով պարտվեց հնդիկ միջազգային վարպետ Սրինաթ Նարայանանին: Գաբուզյանը 4 միավորով 14-րդ տեղում է:

Եվ այսպես, ավարտական տուրը կանվանի մրցաշարի հաղթողին: Ավետիք Գրիգորյանը սեւերով խաղալու է ադրբեջանցի Սարհան Ղուլիեւի հետ: Անտոն Կորոբովի մրցակիցը կլինի Զուրաբ Ստուրուան: Աշոտ Անաստասյանը կհանդիպի Արուն Պրասադի հետ, իսկ Գաբուզյանը կմրցի Վադիմ Մալախատկոյի հետ:

«Սիբիրն» անակնկալ մատուցեց

Կայացան Եվրոպայի լիգայի որակավորման 4-րդ փուլի առաջին հանդիպումները: Այս փուլում հաջողության հասած թիմերն իրավունք կստանան պայքարը շարունակելու խմբային մրցաշարում:

Հաջող հանդես եկան ռուսաստանյան թիմերը: Մեծ անակնկալ մատուցեց Նովոսիբիրսկի «Սիբիրը»՝ սեփական հարկի տակ 1-0 հաշվով պարտության մատնելով հոլանդական «Էյնդհովենին»: Ընդ որում՝ միակ գնդակը դաշտի տերերը խփեցին ավելացված ժամանակում:

ԲԿՄԱ-ն Մոսկվայում 4-0 հաշվով ջախջախեց «Բանանցի» նախկին մրցակից Կիպրոսի «Անորտոսիսին»: 2-ական գոլ խփեցին Դումբիան եւ Տոշիչը: Պայքարը շարունակելու լավ հնարավորություն ունի նաեւ «Լոկոմոտիվը», որը հյուրընկալվելիս ոչ-ոքի (1-1) խաղաց շվեյցարական «Լոզանի» հետ:

Ուկրաինական չորս ակումբներից հաղթեց միայն «Մետալիստը»՝ հյուրընկալվելիս 1-0 հաշվով պարտության մատնելով Կիպրոսի «Օմոնիային»: Վաս հանդես չեկավ նաեւ «Կարպատները»՝ մրցակցի դաշտում «Դալաթասարայի» հետ մրցավեճն ավարտելով ոչ-ոքի (2-2): «Տավրիան» արտագնա խաղում 0-3 հաշվով զիջեց գերմանական «Բայերին», իսկ հաշվով պարտության մատնելով հոլանդական «Էյնդհովենին»: Ընդ որում՝ միակ գնդակը դաշտի տերերը խփեցին ավելացված ժամանակում:



ԲԿՄԱ-ն Մոսկվայում 4-0 հաշվով ջախջախեց «Բանանցի» նախկին մրցակից Կիպրոսի «Անորտոսիսին»: 2-ական գոլ խփեցին Դումբիան եւ Տոշիչը: Պայքարը շարունակելու լավ հնարավորություն ունի նաեւ «Լոկոմոտիվը», որը հյուրընկալվելիս ոչ-ոքի (1-1) խաղաց շվեյցարական «Լոզանի» հետ:

Ուկրաինական չորս ակումբներից հաղթեց միայն «Մետալիստը»՝ հյուրընկալվելիս 1-0 հաշվով պարտության մատնելով Կիպրոսի «Օմոնիային»: Վաս հանդես չեկավ նաեւ «Կարպատները»՝ մրցակցի դաշտում «Դալաթասարայի» հետ մրցավեճն ավարտելով ոչ-ոքի (2-2): «Տավրիան» արտագնա խաղում 0-3 հաշվով զիջեց գերմանական «Բայերին», իսկ «Դնեպրը» սեփական հարկի տակ պարտվեց լեհական «Լեխին» (0-1):

Զախջախիչ պարտություն կրեց Ադրբեջանի միակ ներկայացուցիչ «Դարաբաղը»՝ Դորտմունդում 4 անպատասխան գնդակ ընդունելով սեփական դարպասը: Ավելի խոշոր (0-5) հաշվով Բելառուսի «Դնեպրը» Իսպանիայում պարտվեց «Վիլյառեալին»: Իսկ ահա բելառուսական մյուս թիմը՝ ԲԱՏԷ-ն, սեփական հարկի տակ 3-0 հաշվով առավելության հասավ պորտուգալական «Մարիտիմուի» նկատմամբ: Մինսկի «Դինամոն» հյուրընկալվելիս 1-2 հաշվով զիջեց բելգիական «Բրյուգեին»: Դաղստանական «Անժիին» էլ մրցակցի դաշտում պարտվեց հոլանդական «Ալկմարին» (0-2):

Ահա կայացած մյուս հանդիպումների արդյունքները.

ՊՍԺ (Ֆրանսիա)-«Մարսել» (Իսրայել)՝ 2-0, «Հայդուկ» (Խորվաթիա)-«Ունիրիա» (Ռումինիա)՝ 4-1, «Ֆեյենոորդ» (Հոլանդիա)-«Գենտ» (Բելգիա)՝ 1-0, «Գենկ» (Բելգիա)-«Պորտո» (Պորտուգալիա)՝ 0-3, «Դեբրեցեն» (Հունգարիա)-«Լիտեքս» (Բուլղարիա)՝ 2-0, «Արիս» (Հունաստան)-«Աուստրիա» (Ավստրիա)՝ 1-0, «Պալերմո» (Իտալիա)-«Մարիբոր» (Սլովենիա)՝ 3-0, «Վասլույ» (Ռումինիա)-«Լիլ» (Ֆրանսիա)՝ 0-0, «Նապոլի» (Իտալիա)-«Էլֆսբորգ» (Շվեդիա)՝ 1-0, «Սպորտինգ» (Պորտուգալիա)-«Բրոնդբյու» (Դանիա)՝ 0-2, «Սյաուլա» (Ռումինիա)-«Գրասհոպերս» (Շվեյցարիա)՝ 1-0, «Լիվերպուլ» (Անգլիա)-«Տրաբզոնսպոր» (Թուրքիա)՝ 1-0, «Սելթիկ» (Շոտլանդիա)-«Ուստրեխտ» (Հոլանդիա)՝ 2-0, ԱԻԿ (Շվեդիա)-«Լեւսկի» (Բուլղարիա)՝ 0-0, «Շտուրմ» (Ավստրիա)-«Յուվենտուս» (Իտալիա)՝ 1-2, «Խետաֆե» (Իսպանիա)-«Ապոել» (Կիպրոս)՝ 1-0, «Դանդի Յունայթեդ» (Շոտլանդիա)-ԱԵԿ (Հունաստան)՝ 0-1, «Ռապիդ» (Ավստրիա)-«Աստոն Վիլա» (Անգլիա)՝ 1-1, ԲԿՄԱ (Բուլղարիա)-ՏՆՍ (Ուելս)՝ 3-0, «Բեշիքթաշ» (Թուրքիա)-ՀԻԿ (Ֆինլանդիա)՝ 2-0, «Սլովան» (Սլովակիա)-«Շտուտգարտ» (Գերմանիա)՝ 0-1, «Դյոր» (Հունգարիա)-«Դինամո» (Խորվաթիա)՝ 0-2, «Օդենսե» (Դանիա)-«Մազերվել» (Շոտլանդիա)՝ 2-1, ՊԱՕԿ (Հունաստան)-«Ֆեներբահչե» (Թուրքիա)՝ 1-0, «Տիմիշոարա» (Ռումինիա)-«Մանչեսթր Սիթի» (Անգլիա)՝ 0-1:

Լրացրին գրոսմայստերի նորման

Armchess.am-ի տեղեկացմամբ՝ Էլինա Դանիելյանը Հունաստանի Կավալա քաղաքում անցկացված շախմատի միջազգային մրցաշարում 3 անգամ լրացրել է տղամարդկանց գրոսմայստերի նորման: Ուստի շուտով ՖԻԴԵ-ն բարձրագույն այդ կոչումը կշնորհի Էլինա Դանիելյանին, որը վաղուց կրում է կանանց գրոսմայստերի տիտղոսը:

17-ամյա Վահե Բաղդասարյանը՝ հաջող ելույթներ ունենալով Հունաստանի Կավալա եւ Հալկիդա քաղաքներում անցկացված մրցաշարերում, 2 անգամ լրացրել է գրոսմայստերի նորմաները:

Օլիմպիական չեմպիոնուհին ավարտում է ելույթները

Բարձրացատկի Պեկինի օլիմպիադայի չեմպիոնուհի Թիա Էլեբոն հայտարարել է մեծ սպորտին վերջնականապես հրաժեշտ տալու որոշման մասին: Պատճառը մարզուհու 2-րդ հղիությունն է: 2008-ին Պեկինում բելգիացի մարզուհին սենսացիոն հաղթանակ տոնեց Բլանկո Վլասիչի եւ Աննա Չիչերովայի հետ մրցապայքարում: 2008-ի ավարտին նա հղիության պատճառով դադարեցրել էր ելույթները: Կես տարի առաջ էլեբոն վերսկսեց ելույթները: Վերջերս Բարսելոնում կայացած Եվրոպայի առաջնությունում նա գրավեց 5-րդ տեղը՝ չկարողանալով հաղթահարել 1,97 մետր բարձրությունը: Իսկ Պեկինում նա հաղթել էր 2,05 մետր արդյունքով:

Կրասիչը կխաղա «Յուվենտուսում»

Մոսկվայի ԲԿՄԱ ակումբի ղեկավարությունը պաշտոնապես հայտարարել է թիմի սերբ կիսապաշտպան Միլոշ Կրասիչի «Յուվենտուս» տեղափոխվելու մասին: Կրասիչն իտալական ակումբի հետ հնգամյա պայմանագիր կկնքի: Ֆուտբոլիստի համար «Յուվենտուսը» ԲԿՄԱ-ին 15 մլն եվրո կվճարի: Շաբաթ օրը Թուրինում կկայանա Կրասիչի պաշտոնական ներկայացումը ֆուտբոլասերներին, որի ժամանակ էլ նրան կհանձնվի «Յուվենտուսի» մարզաշապիկը:

ԲԿՄԱ-ում հանդես գալու տարիներին Կրասիչը դարձել է Ռուսաստանի կրկնակի չեմպիոն, երկրի բազմակի գավաթակիր ու սուպերգավաթակիր, թիմի հետ նվաճել է ՈՒԵՖԱ-ի գավաթը:

ՍԻՆԳԱՊՈՒՐ

Հայաստանը 36-րդն է

Սինգապուրում ընթացող ամառային պատանեկան օլիմպիական խաղերի մասնակից 205 երկրներից առայժմ 49-ին է հաջողվել մեդալ նվաճել: Ինչպես հայտնի է, Հայաստանի մարզիկները առայժմ նվաճել են 3 մեդալ (1 արծաթե, 2 բronզե): Մեդալների հաշվարկում Հայաստանը 36-րդն է:

Առայժմ բոլորից հաջող են հանդես գալիս Ռուսաստանի ներկայացուցիչները, որոնք նվաճել են 24 մեդալ (11+9+4): Ոսկե մեդալների քանակով (13) առջեւում Չինաստանի հավաքականն է, որն ընդհանուր առմամբ նվաճել է 22 մեդալ: Լավագույն եռյակը եզրափակում են իտալացիները՝ 13 մեդալ (6+4+3):

Երեկ Հայաստանի մարզիկների համար մրցումներից ազատ օր էր: Այսօր մրցասպարեզ դուրս կգան թիավար Էդգար Բաբայանը, ձյուդոյիստ Դավիթ Ղազարյանը (66 կգ), թեթեւատլետ Դիանա Խուբեսերյանը (100 մ վազք) եւ բոնցֆամարտիկ Հրայր Մաթեւոսյանը (60 կգ):

Նալբանդյանը դուրս մնաց պայքարից

Ցինցինատիում ընթացող թենիսի մրցաշարում Դավիթ Նալբանդյանին չհաջողվեց հաղթահարել 3-րդ փուլի արգելքն ու մտնել քառորդ եզրափակիչ: Նրա ճանապարհը փակեց սերբ Նովակ Ջոկովիչը, որը մրցակցին հաղթեց 6-1, 7-6 հաշվով:

Իր հաղթաշավն է շարունակում Ռաֆայել Նադալը, որը դժվարին մրցախաղում հաղթեց ֆրանսիացի Ժյուլյեն Բենետոյին (5-7, 7-6, 6-2): Իսկ ահա հաղթողի մյուս հավակնորդ Ռոջեր Ֆեդերերը քառորդ եզրափակիչ մտավ առանց կորս դուրս գալու: Նրա մրցակից Ֆիլիպ Կոլշրայբերը վնասվածքի պատճառով հրաժարվեց մրցախաղից:

Քառորդ եզրափակիչում պայքարը կշարունակեն նաեւ Մարկոս Բագդատիսը, Նիկոլայ Դավիդենկոն, Մարդի Ֆիշը, Էնդի Մյուրեյը եւ Էնդի Ռոդիկը:

Տիմա էլ «բասկետբոլային դիվանագիտություն»

Ինչպես տեղեկացանք ՀՀ-ում ԱՄՆ դեսպանության մամուլի բաժնից, սպորտային փոխանակման ծրագրի շրջանակում 24 հայ եւ թուրք պատանիներ ու աղջիկներ հնարավորություն կունենան օգոստոսի 19-29 Թուրքիայում մարզվել ԱՄՆ Բասկետբոլի ազգային ասոցիացիայի՝ NBA-ի նախկին խաղացող Ջորջ Մուրեսանի ղեկավարությամբ:

Ծրագիրը մեկնարկում է մեկ շաբաթ տեւող մարզական ճամբարով՝ Թուրքիայի Օրեն բնակավայրում: Երկրորդ շաբաթվա ընթացքում մասնակիցները կլինեն Իզմիրում եւ հանդես կգան ցուցադրական խաղերով:

2011 թ. հունվարին նույն հայ եւ թուրք մասնակիցները կուղեւորվեն Միացյալ Նահանգներ՝ մարզվելու եւ խաղալու ամերիկացի երիտասարդների հետ: «Հուսով ենք, որ փոխադարձ հարգանքն ու ըմբռնումը այս երիտասարդ մարզիկների միջեւ կծառայեն ի նպաստ Հայաստանի եւ Թուրքիայի՝ որպես հարեւանների եւ երկու երկրների առավել պայծառ ապագայի», ասաց ՀՀ-ում ԱՄՆ դեսպանության գործերի ժամանակավոր հավատարմատար Բրուս Դոնահյուն:

Մ. ՄԱԿԱՐՅԱՆ

Կլիչկո-Բրիգս մենամարտը կկայանա Համբուրգում

Վերջնականապես հաստատվել է, որ գերծանր քաշային կարգում WBC-ի վարկածով աշխարհի ներկայիս չեմպիոն, 39-ամյա ուկրաինացի բոնցֆամարտիկ Վիտալի Կլիչկոյի մենամարտը WBO-ի վարկածով աշխարհի նախկին չեմպիոն, 38-ամյա ամերիկացի Շենոն Բրիգսի հետ տեղի է ունենալու հոկտեմբերի 16-ին, Համբուրգում:

Բրիգսը, որին պրոֆեսիոնալ ռինգում «Թնդանոթ» մականունն են տվել, դեռեւս հուլիսի վերջին էր հայտարարել Կլիչկոյի հետ մենամարտելու մասին: Իսկ Կլիչկոն պաշտոնապես օրերս է հաստատել Բրիգսի հետ մենամարտելու փաստը:

«Բրիգսը ոչ միայն մեծ շատախոս է, այլեւ բարդ մրցակից: Նա ավելի շատ մենամարտեր է անցկացրել, քան ես: Դժվարին նախապատրաստական փուլ է սպասվում, սակայն ինձ կօգնի իմ անփոփոխ մարզիչ Ֆրից Զդունեկը: Ուրախ եմ կրկին Համբուրգում մենամարտելու համար: Հենց այնտեղ է 14 տարի առաջ սկսվել իմ պրոֆեսիոնալ բոնցֆամարտիկի կարիերան», նշել է Կլիչկոն:

Իր վերջին մենամարտը Կլիչկոն անցկացրել է այս տարվա մայիսին Հելզենկիրհենի մարզադաշտում՝ 10-րդ ռաունդում նոկաուտի ենթարկելով լեհ Ալբերտ Սոսնովսկուն: Իսկ Բրիգսն այս տարի 3 անգամ է ռինգ դուրս եկել եւ բոլոր մենամարտերն էլ ավարտել է նոկաուտով: Ճիշտ է, նրա մրցակիցները թույլ բոնցֆամարտիկներ են եղել:

Ամերիկացի բոնցֆամարտիկն առաջին անգամ չեմպիոնի տիտղոսը վիճարկելու հնարավորություն է ունեցել 1998-ին: WBC-ի վարկածով չեմպիոնական գոտու համար մրցավեճում նա տեխնիկական նոկաուտով պարտվել է բրիտանացի Լենոքս Լյուիսին: 8 տարի անց նրան կրկին հնարավորություն ընձեռվեց վիճարկել աշխարհի չեմպիոնի տիտղոսը՝ մենամարտելով WBO-ի վարկածով չեմպիոնական գոտու տեր, բելառուսցի Սերգեյ Լյախովիչի հետ: Այս անգամ Բրիգսին ուղեկցեց հաջողությունը: Նա 12-րդ ռաունդում նոկաուտի ենթարկեց մրցակցին ու դարձավ WBO-ի վարկածով աշխարհի չեմպիոն: 2007-ի հունիսին Բրիգսից չեմպիոնական գոտին խլեց ռուսաստանցի Սուլթան Իբրահիմովը: Այդ մենամարտից հետո Բրիգսը որոշ ժամանակով հեռացավ ռինգից: Եվ միայն անցյալ տարվա դեկտեմբերին նա վերսկսեց մարզումները:

«Ես երկար ճանապարհ եմ անցել Կլիչկոյի հետ հանդիպելու համար: Նրա մրցակիցների մեծամասնությունը ռինգ դուրս գալով, դողում էին վախից: Իսկ ես հաղթանակի համար կօգտագործեմ իմ ողջ ուժն ու փորձը: Կլիչկոն չեմպիոնական իր գոտիով կարող է հիանալ եւս որոշ ժամանակ: Իսկ հոկտեմբերի 16-ին այն կլինի իմը», հայտարարել է Շենոն Բրիգսը:

Պրոֆեսիոնալ ռինգում Վիտալի Կլիչկոն անցկացրել է 42 մենամարտ, որից 40-ում հաղթել է (38-ը՝ ժամկետից շուտ), 2-ում պարտվել է: Շենոն Բրիգսը 60 մենամարտերից 54-ում է հաղթել (45-ը՝ ժամկետից շուտ), մեկն ավարտել է ոչ-ոքի, 5-ում պարտվել է:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

AZG NEW PDF.qxd 20/08/2010 21:48 Page 1

Անշարժ գույքի գների աճ 1 տկոսի շրջակայքում

Գործարքների քանակը հունիսին կրկին ավելացավ

Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի՝ շուկայի վերլուծության տվյալների համաձայն՝ 2010-ի հունիսին, Հայաստանի անշարժ գույքի շուկայում իրականացվել է 15609 գործարք, ինչը 15,5 տոկոսով բարձր է այս տարվա մայիսի եւ 9 տոկոսով՝ 2009-ի հունիսի գործարքների համեմատ: Միայն օտարման գործարքների քանակը հունիսին մայիսի համեմատ աճել է 19,4 տոկոսով, իսկ անցյալ տարվա հունիսի համեմատ՝ նվազել 1 տոկոսով: 3987 օտարման գործարքներից առուվաճառքինը կազմել է 81,1 տոկոսը: Մնացածը նվիրատվություններն ու փոխանակություններն են: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 39,1 տոկոսն արձանագրվել է Երեւան քաղաքում:

Մայրաքաղաքում առուվաճառքի գործարքների 64,9 տոկոսն արձանագրվել է բազմաբնակարան շենքերի բնակարանների նկատմամբ: 2010-ի մայիսի համեմատ, բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը Երեւանում աճել է 19,9 տոկոսով, իսկ նախորդ տարվա հունիսի համեմատ՝ 6,9 տոկոսով:

Բնակարանների շուկայական միջին գները Երեւանում այս տարվա հունիսին մայիսի համեմատ աճել են՝ 1,1 տոկոսով: Ըստ վարչական շրջանների, Երեւանում բնակարանների 1 քմ մակերեսի միջին շուկայական գները այսպիսին են եղել.

	Միջին գները (դրամ)		
Վարչական շրջաններ	**հունիս 2009թ.**	**հունիս 2010թ.**	**մայիս 2010թ.**
Կենտրոն	462800	478100	469500
Արաբկիր	350400	395500	392200
Քանաքեռ-Զեյթուն	271700	294300	289700
Նոր Նորք	222600	246200	244700
Ավան	225700	249900	247900
Էրեբունի	243300	259900	252600
Շենգավիթ	235500	263800	262100
Դավթաշեն	250900	281400	280400
Աջափնյակ	233600	242300	242300
Մալաթիա-Սեբաստիա	218600	253400	251200
Նուբարաշեն	134700	147800	145900
Միջինը Երեւանում (բացի Նոր Նորք-Մարաշից)	259300	283000	279900

Մարզերում, բացառությամբ Երեւանի, հունիսին վաճառվել են 370 բնակարաններ, որոնց քանակը մայիսի համեմատ աճել է 34,1 տոկոսով, իսկ 2009-ի հունիսի համեմատ 13,5 տոկոսով: Բնակարանների միջին գները հունիսին մայիսի համեմատ աճել են 1 տոկոսով:

Երեւանից հետո ամենաթանկ բնակարանները հունիսին եղել են Ծաղկաձորում, որտեղ 1 քմ մակերեսի շուկայական գինը կազմել է ավելի քան 181 հազար դրամ: Վաղարշապատում (Էջմիածնում) 166 հազար դրամ է կազմել, Աբովյանում 1 քմ գինը՝ 162 հազար դրամ: Ապա գալիս են Աշտարակը եւ Իջեւանը՝ 142 հազար դրամ, Գորիսը՝ 139 հազար դրամ, Մասիսը՝ 133 հազար դրամ 1 քմ դիմաց ցուցանիշներով:

2010-ի հունիսին Հայաստանում գրանցվել է անհատական տների առուվաճառքի 413 գործարք, որից 116-ը՝ Երեւանում: Մայրաքաղաքում անհատական տների առուվաճառքի գործարքների քանակը հունիսին մայիսի համեմատ աճել է 22,1 տոկոսով, իսկ մարզերում՝ 21,2 տոկոսով: 2009-ի հունիսի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը Երեւանում աճել է 0,9 տոկոսով, իսկ մարզերում միասին վերցրած՝ նվազել 3,3 տոկոսով:

Միջինացված՝ 250 քմ շինության մակերես եւ 400 քմ տնամերձ ունեցող անհատական տների 1 քմ-ի միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը) 2010-ի հունիսին մայիսի համեմատ աճել են 0,9 տոկոսով: Ըստ Երեւանի վարչական շրջանների, գներն այսպիսին են եղել.

	Միջին գները (դրամ)		
Վարչական շրջաններ	**հունիս**	**հունիս**	**մայիս**
Կենտրոն	493000	488700	487700
Արաբկիր	382000	405400	399200
Քանաքեռ-Զեյթուն	298000	297000	294700
Նորք-Մարաշ	299500	288100	287200
Ավան	251300	256000	251900
Էրեբունի	273000	264000	260300
Շենգավիթ	261300	269900	265900
Դավթաշեն	281000	288600	286100
Աջափնյակ	269500	251900	249400
Մալաթիա-Սեբաստիա	252000	255600	253200
Նուբարաշեն	152300	149100	148400
Միջինը Երեւանում (բացի Նոր Նորքից)	292100	292200	289500

Մարզերում միջինացված են 200 քմ շինության եւ 1000 քմ տնամերձ մակերեսով անհատական տների վերաբերյալ գները: Այստեղ միջին գները հունիսին մայիսի համեմատ նույնպես աճել են՝ 1 տոկոսով, իսկ ամենաթանկ անհատական տները դարձյալ Ծաղկաձորում են՝ 1 քմ-ն 351 հազար դրամ: Այս ցուցանիշով Ծաղկաձորը զիջում է միայն Երեւանի Կենտրոն եւ Արաբկիր շրջաններին: Երկրորդը Աբովյանն է, 1 քմ-ն՝ 174 հազար դրամ, երրորդը Վաղարշապատն է, որտեղ 1 քմ-ն կազմել է 171 հազար դրամ: Ապա գալիս են Աշտարակը 150 հազար դրամ, Իջեւանը՝ 146 հազար դրամ, Գորիսը՝ 145 հազար դրամ, Նոր Հաճընը՝ 136 հազար դրամ, Եղվարդը՝ 128 հազար դրամ 1 քմ դիմաց:

Հողի շուկայում հետեւյալ պատկերն է՝ 2010-ի հունիսին 2009-ի հունիսի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակն նվազել է 4 տոկոսով, աճուրդով վաճառվող հողերինը՝ 28,8 տոկոսով:

2010-ի հունիսին մայիսի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 17 տոկոսով, իսկ 2009-ի հունիսի համեմատ նվազել՝ 21,4 տոկոսով:

Հունիսին իրականացվել են հիպոթեկային գրավադրման 167 գործարքներ, որից 116-ը՝ Երեւանում: Հիպոթեկային գրավադրման գործարքներից 77,2 տոկոսն իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 16,8 տոկոսը՝ անհատական բնակելի տների, մնացածը հասարակական նշանակության օբյեկտների, այգեշնակների եւ հողերի նկատմամբ: 2010-ի մայիսի համեմատ, հիպոթեկային գրավադրման գործարքների քանակը աճել է 8,4 տոկոսով, ընդ որում Երեւանում՝ 0,9 տոկոսով, իսկ մարզերում՝ 30,8 տոկոսով: 2009-ի հունիսի համեմատ, հիպոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 2,5 անգամ, ընդ որում, Երեւանում՝ 2,3 անգամ, մարզերում՝ 2,8 անգամ:

Այսպիսով, 2010-ի հունիսին շարունակվել է անշարժ գույքի գների ամսական փոքր աճի (1 տոկոսի շրջակայքում) ավելի քան 1 տարի առաջ սկսված միտումը: Բացի այդ, արձանագրվել է նաեւ գործարքների քանակի ավելացում, հակառակ նախորդող երկու ամիսներին դրանց արձանագրված նվազմանը:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հարսանիքից՝ հիվանդանոց

Օգոստոսի 19-ին ժամը 21.30-ի սահմաններում Երեւանի Հրազդանի կիրճում գտնվող «Գեղամա» ռեստորանից սննդային թունավորման նախանշաններով հիվանդանոց են տեղափոխվել նորապսակների հանդիսությանը մասնակցող 41 քաղաքացի. 22-ը՝ «Արմենիա», 8-ը՝ «Նորք», 7-ը՝ «Էրեբունի», 1-ը՝ «Մուրացան» բժշկական կենտրոններ եւ 2-ը՝ 3-րդ հիվանդանոց:

«Ազգ» **ՀՀ առողջապահության նախարարի 1-ին տեղակալ Հայկ Դարբինյանից տեղեկացավ, որ ահազանգն ստանալուն պես նախարարության սանիտարա-հիգիենիկ տեսչության բրիգադները շտաբել են «Գեղամա» ռեստորան, եւ տեղում վերցրել են սննդամթերքների նմուշներ ու ուղարկել համապատասխան լաբորատորիա հետազոտության՝ պարզելու, թե ի՞նչը կարող էր մասսայական թունավորման պատճառ հանդիսանալ: Ավելի ուշ երեք փոխնախարարները այցելել են բոլոր հիվանդներին, զրուցել նրանց հետ: Հիվանդանոցներում գտնվող հիվանդներից նաեւ վերցվել է փխսման անալիզի նմուշ, ճշտելու թունավորման բուն պատճառները:**

Պրն Դարբինյանը նշեց, որ օգոստոսի 20-ին ժամը 17-ի դրությամբ հիվանդանոցում է գտնվում 5 մարդ, որոնցից 4-ի առողջական վիճակը բժիշկները գնահատում են միջին ծանրության:

Առողջապահության նախարարության կողմից «Գեղամա» ռեստորանը փակվել է: Տեղում իրականացվում են վարակազերծման, ինչպես նաեւ թունավորման պատճառները պարզելու աշխատանքներ:

Հուսախություն հարսանավորների, նշենք, որ հարսն ու փեսան արդեն դուրս են գրվել հիվանդանոցից: Սակայն միջադեպը, որը խաթարեց նրանց կյանքի ամենասպասված տոնը, երբեք չեն մոռանա:

Ինչպես «Ազգին» ասաց «Նորք» ինֆեկցիոն հիվանդանոցի ղեկավար Արայիկ Ասոյանը, «վերցված անալիզների հետազոտումը տեւում է ամենաքիչը 72 ժամ, երբեմն էլ 144 ժամ, եթե լրացուցիչ ճշտելու կարիք է զգացվում: Ուստի դեռ վաղ է ասել, թե ինչ սննդամթերքից էին թունավորվել հարսանավորները, ավելորդ գուշակություններ անելու կարիք չկա: Երբ պարզվի, մենք պաշտոնապես կտեղեկացնենք»:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ

Տնտեսական աճը դարձավ 4 տոկոս

Հուլիսին զգալի նվազում է արշանագրվել հունիսի համեմատ

Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության հրապարակած 2010-ի հունվար-հուլիս ամիսների օպերատիվ սոցիալ-տնտեսական ցուցանիշների համաձայն՝ Հայաստանի տնտեսական աճը կազմել է 4 տոկոս: Համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) կազմել է մոտ 1 տրիլիոն 586 մլրդ դրամ: Փաստորեն, աճի տեմպը նվազել է, քանի որ հունվար-մայիսի ամիսներին կազմել էր 8,8 տոկոս, իսկ հունվար-հունիսին՝ 6,7 տոկոս: Հուլիսին հունիսի նկատմամբ արձանագրվել է զգալի՝ 19,2 տոկոս անկում, որը բավականին մտահոգիչ ցուցանիշ է: Տնտեսական աճի տեմպի նվազումն ու հուլիս ամսին նախորդ ամսվա նկատմամբ արձանագրված անկումը հիմնականում պայմանավորված են գյուղատնտեսության արտադրանքի եւ շինարարության ծավալների նվազմամբ:

Ըստ տնտեսության ճյուղերի՝ պատկերը հետեւյալն է: Արդյունաբերությունում հունվար-հուլիսին աճը կազմել է 11,4 տոկոս, եւ 4,5 տոկոս աճ է գրանցվել հուլիսին հունիսի նկատմամբ: Էլեկտրաէներգիայի արտադրությունը հունվար-հուլիսին աճել է 16 տոկոսով, իսկ հուլիսին հունիսի նկատմամբ աճը կազմել է 6,7 տոկոս: Տնտեսության ճյուղերից աճի ամենաբարձր ցուցանիշներն արձանագրվել են այս 2 ոլորտներում, ինչը որոշակի սփոփանք է ընդհանուր աճի տեմպի նվազման տվյալների համեմատ:

Շինարարությունում տարվա առաջին 7 ամիսներին աճը կազմել է ընդամենը 0,1 տոկոս, իսկ հուլիսին հունիսի նկատմամբ արձանագրվել է 15,8 տոկոս անկում: Գյուղատնտեսությունում անկումը կազմել է 23 տոկոս, թեեւ հուլիսին հունիսի նկատմամբ արձանանագրվել է 55,4 տոկոս աճ:

Ծառայությունների ոլորտում այս տարվա հունվար-հուլիսին արձանագրվել է 6,1 տոկոս աճ, իսկ հուլիսին հունիսի նկատմամբ՝ 2,8 տոկոս աճ: Մանրածախ առեւտրում իրավիճակը մնացել է անփոփոխ, իսկ հուլիսին հունիսի նկատմամբ արձանագրվել է 10,7 տոկոս աճ:

Պետական միջին աշխատավարձերի աճի ցուցանիշը կազմել է 4,4 տոկոս՝ հասնելով 85,3 հազար դրամի, ոչ պետական հատվածում միջին աշխատավարձն ավելացել է 11 տոկոսով եւ կազմել 134 հազար դրամ:

Արտաքին առեւտրաշրջանառությունն այս տարվա 7 ամիսներին ավելացել է 26,5 տոկոսով եւ կազմել 2 մլրդ 548 մլն դոլար: Արտահանումը կազմել է 512,7 մլն դոլար՝ արձանագրելով 43,3 տոկոս աճ, բայց հուլիսին հունիսի նկատմամբ՝ 11,3 տոկոս անկում: Ներմուծումը կազմել է 2 մլրդ 36 մլն դոլար, աճելով 22,8 տոկոսով, իսկ հուլիսին հունիսին համեմատ մնալով անփոփոխ: Արտաքին առեւտրի բացասական հաշվեկշիռը շարունակել է խորանալ՝ գերազանցելով 1,5 մլրդ դոլարը:

Գնաճը հուլիսին հունիսի նկատմամբ նվազել է 0,8 տոկոսով եւ հունվար-հուլիսին կազմել 7,4 տոկոս:

Այսպիսով, եթե այս տարվա առաջին կիսամյակի ցուցանիշները թույլ էին տալիս ասել, որ մեր երկրի տնտեսությունը դուրս է գալիս ճգնաժամից, ապա հուլիսին հունիսի նկատմամբ արձանագրված անկումը՝ որ այն դեռեւս բավարար չափով դիվերսիֆիկացված չէ: Տնտեսության մեկ ճյուղում արձանագրվող անկումը նկատելի ազդեցություն է թողնում տնտեսական աճի ընդհանուր ցուցանիշի վրա:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ֆիզիկական անձանց վարկավորման ծավալներով «Յունիբանկ»-ն առաջին եռյակում է

2010թ.-ի առաջին կիսամյակի արդյունքներով «Յունիբանկ»-ը ֆիզիկական անձանց վարկավորման ծավալներով ընդգրկվել է բանկերի առաջին եռյակում: Ֆիզիկական անձանց վարկավորման ծավալը բանկում կազմել է 26.8 մլրդ դրամ կամ բանկի ընդհանուր վարկային ներդրումների 37,3 տոկոսը: 30.06.10թ.-ի դրությամբ բանկի սպառողական վարկավորման ծավալը կազմել է 22.7 մլրդ դրամ: Այդ ցուցանիշով «Յունիբանկ»-ը ՀՀ բանկային համակարգում զբաղեցնում է երկրորդ տեղը: Սպառողական վարկավորման ծավալների աճը համահունչ է բանկի ռազմավարությանը՝ զարգացնել մանրածախ բիզնեսը: Ֆիզիկական անձանց հետ աշխատանքում բանկը նախընտրում է «բանկային սպասարկում տան մոտ» սկզբունքը՝ ակտիվորեն ընդլայնելով մասնաճյուղային ցանցը եւ անհատական մոտեցմամբ մշակելով նոր առաջարկներ հնարավոր հաճախորդների յուրաքանչյուր խմբի համար: Ներկայումս «Յունիբանկ»-ն ունի 33 մասնաճյուղեր, որոնցից 3-ն աշխատում են երկարացված ռեժիմում (մինչեւ 20:30), իսկ մեկը՝ «Զվարթնոց» մասնաճյուղը, շուրջօրյա:

Շաբաթական ամփոփ տվյալներ

Օգոստոսի 17-ից 20-ն ընկած ժամանակահատվածում արտարժույթի ներբանկային շուկայում բանկերի կողմից գնվել է 52,239,819 ԱՄՆ դոլար՝ 366.22 դրամ ԱՄՆ մեկ դոլարի դիմաց միջին փոխարժեքով, և վաճառվել 58,092,337 ԱՄՆ դոլար՝ 367.84 դրամ ԱՄՆ մեկ դոլարի դիմաց միջին փոխարժեքով:

«ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ում նշված ժամանակահատվածում իրականացվել է 6,527,000 ԱՄՆ դոլարի առք և վաճառք՝ 366.31 դրամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց միջին փոխարժեքով:

Նույն ժամանակահատվածում միջբանկային շուկայում իրականացվել է 300,000 ԱՄՆ դոլարի առք և վաճառք՝ 367.90 դրամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց միջին փոխարժեքով:

Օգոստոսի 9-ից 15-ն ընկած ժամանակահատվածում բանկերի կողմից դրամով տրամադրված վարկերի ծավալը կազմել է 16 մլրդ դրամ, իսկ ԱՄՆ դոլարով տրամադրված վարկերի ծավալը՝ 37.7 մլն ԱՄՆ դոլար:

ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 20.08.2010, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տաճար» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: